

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ԲԻԶՆԵՍԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԱՄԲԻՈՆ

Ծրագրի գիտական ղեկավար՝

տ. գ. դ., պրոֆեսոր Ա.Ե. Զաքարյան

Կատարողներ՝

տ. գ. թ., դոցենտ Ա.Վ. Գրիգորյան

տ. գ. թ. Վ.Հ. Գրիգորյան

տ. գ. թ. Ն.Ժ. Ղուկասյան

տ. գ. թ. Կ.Հ. Առաքելյան

Դ/014

**ՀՀ-ՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ**

2012–2013 թթ. ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
2014

ՀՏԴ 378(479.25)

ԳՄԴ 74.58

Հ 247

Երաշխավորվել է հրատարակության
ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից

ՀՀ-ում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկի
Հ 247 գնահատումը և կանխատեսումը/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Ա.Ե. Զաքարյան;
Կատարողներ՝ Ա.Վ. Գրիգորյան, Վ.Հ. Գրիգորյան, Ն.Ժ. Ղուկասյան, Կ.Հ. Առաքելյան.-
Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.-78 էջ:

ՀՏԴ 378(479.25)

ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-61-079-5

© Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Տնտեսագետ» հրատարակչություն, 2014

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Արդի համաշխարհային տնտեսության ու հասարակական կյանքի վերափոխումները, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն իրենց ազդեցությունն են թողնում մարդկային գործունեության բնագավառների ու զբաղմունքների ձևերի վրա (փոփոխելով որոշների նկարագրերը, որոշները դարձնելով ոչ պիտանի կամ ձևավորելով նորերը): Այս գործընթացը լրջորեն անդրադառնում է նաև մասնագիտական կրթության և դրան առաջադրվող խնդիրների դաշտի վերափոխումների վրա: Այս համատեքստում պետք է նշել, որ ամբողջ աշխարհում տնտեսագիտական մասնագիտությունները ևս կրել ու կրում են զգալի փոփոխություններ, ինչը պայմանավորված է ծառայությունների ոլորտի զարգացմամբ ու դրա արդյունքում, տնտեսական գործունեության նոր ոլորտների ի հայտ գալով, բիզնես գործընթացների արագացմամբ, ինչպես նաև վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, որն էականորեն սրեց «սպիտակ օձիքավորների» ու, հատկապես, տնտեսագետ կադրերի աշխատանքով ապահովման խնդիրները: Ուշագրավ է, որ ներկայացված խնդիրներից անմասն չեն մնացել նաև ՀՀ-ում տնտեսագիտական տարբեր մասնագիտությամբ կադրերը: Դա, բացի վերը բերված խնդիրներից, պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ-ում կադրերի պատրաստումը հաճախ չի բխում աշխատաշուկայի և գործատուների պահանջներից, ինչպես նաև շրջանավարտների համար հետագա ինքնաիրացման լայն դաշտ ապահովելու անհրաժեշտությունից: Նման պայմաններում հաճախ թողարկվում են կամ պահանջարկ չունեցող մասնագիտություններով և մասնագիտացումներով կադրեր, կա՛մ թողարկված կադրերի ծավալներն էականորեն գերազանցում են առկա պահանջարկը: Հիմնականում այս բացը լրաց-

նելու և ՀՀ-ում թողարկվող մասնագիտություններով ու մասնագիտացումներով տնտեսագետ կադրերի առկա և միջնաժամկետում ներուժային պահանջարկի գնահատման ու կանխատեսման, ինչպես նաև դրանց վարկանիշավորման անհրաժեշտությամբ էլ պայմանավորվել է ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհների նպատակային ծրագրային ֆինանսավորմամբ իրականացվող՝ «ՀՀ-ում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկի գնահատումը և կանխատեսումը» թեմայով գիտական հետազոտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել ՀՀ-ում տնտեսագիտական մասնագիտությունների պահանջարկի վերլուծություն և բարձրագույն տնտեսագիտական մասնագիտությամբ կադրերի ինքնաիրացման առկա և միջնաժամկետ հնարավորությունների գնահատում՝ ըստ առանձին մասնագիտությունների և մասնագիտացումների: Իբրև առանձին նպատակ են սահմանվել նաև ՀՊՏՀ երկաստիճան համակարգի (բակալավրիատ և մագիստրատուրա) կրթական ծրագրերի նկատմամբ պահանջարկի գնահատումը և վարկանիշավորումը: Նշված նպատակներով առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

➤ վերլուծել ՀՀ-ում առկա տնտեսագիտական մասնագիտությունները և դրանց թողարկման առանձնահատկությունները (տարբեր բուիերում),

➤ գնահատել ՀՀ-ում բարձրագույն կրթության և մասնավորապես՝ տնտեսագիտական մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի շարժընթացը, տնտեսագիտական մասնագիտությունները թողարկող բուիերի կրթական ծրագրերի նկատմամբ պահանջարկի շարժընթացը և ՀՀ պետական ու մասնավոր բուիերի մասնաբաժինները կրթական շուկայի տնտեսագիտական մասնագիտությունների իրականացման հատվածում,

➤ բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի նկատմամբ դիմորդների հնարավոր պահանջարկի կանխատեսման նպատակով գնահատել միջնաժամկետում դպրոցների շրջանավարտների և բուհերի բակալավր կրթության շրջանավարտների հավանական ծավալը,

➤ գնահատել բուհ-աշխատաշուկա կապի որակը, բարձրագույն կրթությամբ մասնագետների զբաղվածության աստիճանը, մասնագիտությունից դիմորդների ակնկալիքների շրջանակը և աշխատաշուկայի առաջադրած պայմանները,

➤ աշխատաշուկայում տնտեսագիտական մասնագիտություններով նոր աշխատատեղերի առաջացման կանխատեսման նպատակով գնահատել առկա զբաղվածության տարիքային խմբերով միջնաժամկետում նոր աշխատատեղերի առաջացման (կապված զբաղվածների թոշակի անցման հետ) և, ըստ ՀՀ Կառավարության, տնտեսության տարբեր ոլորտների զարգացման հայեցակարգերով նախատեսվող նոր աշխատատեղերի ձևավորման հավանականությունը,

➤ վերլուծել ՀՊՏՀ երկաստիճան համակարգի մասնագիտությունների և մասնագիտացումների պահանջարկը, բակալավրիատ-մագիստրատուրա անցման պարագայում՝ ՀՊՏՀ կրթական ծառայության ներքին սպառողների պահանջարկի վերարտադրության մակարդակը (համաբուհական և ըստ առանձին մասնագիտությունների):


Հետազոտության տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Համաշխարհային տնտեսական համաժողովի հրապարակումները, պաշտոնական տեղեկատվական նյութերը, որոշումները և նորմատիվային այլ ակտեր: Որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել նաև ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հրապարակումները, պաշտոնական կայքերում գե-

տեղված նյութերը, ՀՀ աշխատաշուկայի սուբյեկտների շրջանակում հետազոտական խմբի իրականացրած հարցումների արդյունքները, զբաղվածության կենտրոնների մշտադիտարկումների արդյունքները, ինչպես նաև ՀՊՏՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքները: Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական հետազոտությունների համակարգային և իրավիճակային մոտեցումների, վիճակագրական, գործոնային, համեմատական վերլուծության, աղյուսակային և գծապատկերային վերլուծության մեթոդներ:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Սա ՀՀ կրթական շուկայի և կրթական ծառայություններ սպառողների պահանջմունքների խորքային վերլուծություն է, որի արդյունքները կարող են կիրառվել ոլորտի ռազմավարական զարգացման ծրագրերի ու անհրաժեշտ քանակությամբ մասնագիտություններով և մասնագիտացումներով կադրերի պատրաստման ծրագրերի մշակման և ոլորտի զարգացման կանխատեսումների իրականացման աշխատանքներում:

**1. ՀՀ-ՈՒՄ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՈՒ ՆԵՐՈՒԺԱՅԻՆ
ՊԱՀԱՆՋԱՐԿԸ**

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության նկատմամբ պահանջարկը հիմնականում պայմանավորված է դրա սպառողական հատկություններով և սպառման (կրթական ծառայության դեպքում՝ մասնագիտական կարողությունների արագ ու արդյունավետ իրացման) հնարավորություններով: Ասվածից ակնհայտ է, որ վերջինի նկատմամբ պահանջարկը պայմանավորված է դրա սպառողների առանձնահատուկ պահանջներով և ակնկալիքներով: Մյուս կողմից՝ կրթական ծառայության՝ իբրև ապրանքի առանձնահատկությունն այն է, որ դրա սպառողների որոշ մասը ապրանքը սպառում է՝ ոչ թե գնելով անմիջական թողարկողից (մասնագիտական ուսումնական հաստատությունից-ՄՈՒՀ), այլ վերջինի մատուցած ծառայությունն արդեն նախապես գնած անհատներից (ՄՈՒՀ-ի շրջանավարտներից): Սակայն, անկախ այս հանգամանքից, մասնագիտություն թողարկողը, բացի անմիջական սպառողներից, ստիպված է ուսումնասիրել նաև նմանատիպ սպառողների պահանջարկը, և իր թողարկած ապրանքի նկատմամբ առաջադրված պահանջների շրջանակը, ինչից էականորեն կախված է նաև անմիջական սպառողների պահանջարկի մեծությունը:



Գծապատկեր 1. Կրթական ծառայությունների սպառողները

Պետք է նշել, որ կրթական ծառայության՝ իբրև ապրանքի սպառողներ են հանդիսանում դիմորդ ուսանողները (որպես հետագա ինքնաիրացման նպատակով կրթական ծառայության անմիջական գնորդներ), գործատուները (որպես որոշակի կարողություններով օժտված անհատների մասնագիտական ունակությունների գնորդներ), պետությունը (և՛ որպես գործատու, և՛ որպես կրթական ծառայության անմիջական գնորդ՝ պետական պատվերի շրջանակներում), միջազգային աշխատաշուկայի սուբյեկտները (որպես գործատու) և հասարակությունը: Ասվածից հետևում է, որ կրթական ծառայության նկատմամբ պահանջարկի հիմնական փոփոխականը պետք է հիմնվեր այն առաջնահերթ սպառող ուսանողների (կրթական ծրագրի դիմորդների) կողմից աշխատաշուկայում իրենց ստացած գիտելիքների և դրանց մասին հավաստող համապատասխան փաստաթղթերի միջոցով հավելյալ մրցակցային առավելությունների ձեռքբերման ու կրթության նպատակով ներդրումներն արագորեն, ավելի բարձր վարձատրվող աշխատանքով փոխարինելու հնարավորության ստացման վրա: Մյուս կողմից՝ պահանջարկի կարևոր փոփոխական պետք է հանդիսանար նաև պետական և մասնավոր հատվածներում համապատասխան մասնագիտական ունակություններով օժտված կադրերի պահանջարկի մեծությունը: Դա նշանակում է, որ թե՛ բուհերը (համապատասխան մասնագիտություններ թողարկելիս), թե՛ դիմորդները (մասնագիտություն ընտրելիս) պետք է առաջնորդվեին պետական և մասնավոր հատվածի ներկայացրած պահանջարկի մեծությամբ և աշխատաշուկայում համապատասխան մասնագիտությունն արագորեն իրացնելու հնարավորությամբ (հավանականությամբ): ՀՀ-ում, սակայն, բարձրագույն կրթություն ստանալու պահանջմունքի հիմքում, վերոնշյալին զուգահեռ, անկախ հետագայում ընձեռվելիք հնարավորություններից, ընկած է նաև հայկական ընտանիքներում ավանդաբար կարծրացած՝ անպայմանորեն կրթված լինելու մոտեցումը, ինչը խթանվում է նաև կրթության համեմատաբար մատչելիությամբ, որն էլ իբրև սկզբունք ամրագրված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության

մասին» ՀՀ օրենքում: ¹ Ասվածից ակնհայտ է, որ ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական և մասնավորապես՝ տնտեսագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի և դիմորդների կողմից առանձին տնտեսագիտական մասնագիտությունների ընտրության պատճառային կապերի վերլուծությունը և հետագա կանխատեսումները պահանջում են, որ պետական ու մասնավոր հատվածում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ կադրերի նկատմամբ ներկայացվող պահանջարկի վերլուծությանը զուգահեռ իրականացվի նաև բարձրագույն կրթություն ստացողների և բուհերի դիմորդների մեջ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների ու դիմորդների մասնաբաժնի և դրա շարժընթացի վերլուծություն: Ընդ որում, առաջինն անհրաժեշտ է որոշակի մասնագիտությունների և մասնագիտացումների նկատմամբ իրական պահանջարկի կանխատեսման, առկա մասնագիտացումների ցանկի հստակեցման և նոր մասնագիտացումների թողարկման, իսկ երկրորդը՝ հետագայում ևս տնտեսագիտական մասնագիտությունների հնարավոր դիմորդների թվի կանխատեսման համար (ինչը, նշված կարծրատիպի դեպքում, թերևս, կշարունակի երկրորդ պլան մղել աշխատաշուկայում ինքնաիրացման հնարավորությամբ մասնագիտության ընտրության փաստարկը):

Պետք է ընդգծել, որ, գուցե, վերը նշված կարծրատիպի առկայությունն է պատճառը, որ ՀՀ բուհական երկաստիճան համակարգում կրթական անհրաժեշտ տեղերի տարեկան հաշվարկն ու ՀՀ ԿԳՆ կողմից մասնագիտական տարբեր ուսումնական հաստատություններին տեղերի հատկացումն իրականացվել են ոչ թե տնտեսական հաշվարկի ու աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի հարաբերակցության հիման վրա, այլ ապրիորի: Ավելին, 2007-2012 թթ ՀՀ ԿԳՆ-ն հատկապես պետական բուհերին թույլատրել է լրացուցիչ ընդունել նախապես տրված կրթական տեղերից 20-30%-ով ավելի ուսանողներ: Մասնավորապես՝ նշված ժամանակահատվածում ԿԳՆ թույլատվությամբ ՀՊՏՀ-ն 920-960-ի փոխարեն (որից՝ տարբեր տարիների անվճար հիմունքներով՝ 60-100 ուսանող) բակալավրիատ է ընդունել համապատասխանաբար՝ 1204

¹ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 4, 2-րդ կետ:

(2008), 1372 (2009), 1379 (2010), 1117 (2012) ուսանողի, ինչը նախապես հատկացվածից միջինում ավելի է 200-420 տեղով կամ 20-45%-ով: Նույն պատկերն է նաև տնտեսագիտական մասնագիտությունների մագիստրոսական կրթության ծրագրերի տեղերի հստակեցման պարագայում (դրսևորվել է ինչպես նոր մասնագիտացումների և հեռակա ուսուցման կրթական ծրագրերի ներդրման հաշվին մագիստրոսական տեղերի ավելացման, այնպես էլ նախապես հատկացված տեղերից ավելի դիմորդների հրամանագրման ձևերով): Վերջինը հանգեցրել է տնտեսագիտական մասնագիտություններով բարձրագույն կրթությամբ կադրերի գերարտադրության:

Հարկ է նշել, որ բացի տարբեր մասնագիտություններով կրթական ծրագրերի տեղերի ավելացումից խնդիրներ են առաջացել նաև տնտեսագիտական մասնագիտությունների ու մասնագիտացումների հստակեցման գործում:

ՀՀ Կառավարության կողմից բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը վերջին անգամ հստակեցվել է 2007 թվականի օգոստոսի 30-ին՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1038-Ն որոշմամբ: Թեև հետագայում ցանկում կատարվել են որոշակի լրացումներ, սակայն, դրանք տնտեսագիտական մասնագիտությունների հետ առնչություն չունեն: Ըստ այդմ՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատվել են բարձրագույն կրթության 17 տնտեսագիտական մասնագիտություններ՝ «Տնտեսագիտության տեսություն», «Կառավարում», «Ֆինանսներ», «Կոմերցիա», «Վիճակագրություն», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում», «Աշխատանքի տնտեսագիտություն», «Բնօգտագործման տնտեսագիտություն», «Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ», «Հողագույքային հարաբերություններ», «Կառավարման տեղեկատվական համակարգեր», «Ապահովագրական գործ», «Հաշվապահական հաշվա-

ռում (ըստ ճյուղերի)», «Ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն» և «Շուկայաբանություն»: Պետք է նշել, որ 2007 թվականի դրությամբ հստակեցված բարձրագույն կրթության տնտեսագիտական մասնագիտությունների ցանկը նախորդի համեմատ կրել է էական փոփոխություններ: Նախ՝ որոշ մասնագիտություններ բացառվել են, որոշները՝ խոշորացվել: Կատարվել են նաև մասնագիտությունների անվանափոխություններ, ինչպես նաև փոփոխվել է դրանց յուրացման արդյունքում շնորհվող որակավորումների ցանկը: Այսպես՝ նախկինում բոլոր մասնագիտությունների շրջանավարտներին շնորհվող տնտեսագիտության բակալավրի և տնտեսագիտության մագիստրոսի աստիճանների փոխարեն բուհական համակարգում սկսել են կիրառվել տնտեսագիտության բակալավրի և տնտեսագիտության մագիստրոսի, կառավարման բակալավրի և կառավարման մագիստրոսի, վիճակագրության բակալավրի և վիճակագրության մագիստրոսի, կոմերցիայի բակալավրի և կոմերցիայի մագիստրոսի, ինչպես նաև ճարտարագիտության բակալավրի (ըստ ճյուղերի) և ճարտարագիտության մագիստրոսի (ըստ ճյուղերի) աստիճաններ: Որակավորումների փոփոխության հիմնական նպատակը կարելի է համարել ՀՀ բուհերի շրջանավարտներին շնորհվող որակավորումների՝ միջազգային պրակտիկայում առավել հայտնի՝ տնտեսագիտության բակալավրի և տնտեսագիտության մագիստրոսի, ինչպես նաև բիզնեսի կառավարման բակալավրի և բիզնեսի կառավարման մագիստրոսի (առանձին մասնագիտություններով) աստիճանների հետ համադրելիության ապահովումը, ինչը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքի խնդիրներից մեկն է: Մասնագիտությունների նոր ցանկում վերանվանվել են «Համաշխարհային տնտեսագիտություն» (նոր մոտեցմամբ՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ»), «Ազգային տնտեսագիտություն» (նոր մոտեցմամբ՝ «Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում»), «Տեսական տնտեսագիտություն» (նոր մոտեցմամբ՝ «Տնտեսագիտության տեսություն»), «Բնության օգտագործման տնտեսագիտություն» (նոր մոտեցմամբ՝ «Բնօգտագործման տնտեսագիտություն»), «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» (նոր մոտեցմամբ՝ «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», «Մաթեմատիկական մեթոդներ և գործառնությունների հետազոտությունը տնտեսագիտության մեջ» (նոր մոտեցմամբ՝ «Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ») և «Առևտուր» (նոր մոտեցմամբ՝ «Կոմերցիա») մասնագիտությունները: Մասնագիտությունների խոշորացումներ կատարվել են հետևյալ ուղղություններով՝ «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտությունը ցանկից բացառվել է. ներկայումս այն «Կոմերցիա» մասնագիտության առանձին մասնագիտացումն է, «Ֆինանսներ և վարկ», «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում», «Մաքսային գործ» մասնագիտությունները իբրև առանձին մասնագիտացումներ, միավորվել են «Ֆինանսներ» մասնագիտության շրջանակներում, «Կառավարում», «Պետական և մունիցիպալ կառավարում», «Հակաճգնաժամային կառավարում» մասնագիտությունները, իբրև առանձին մասնագիտացումներ միավորվել են նոր՝ «Կառավարում» մասնագիտության շրջանակում: Նոր ցանկից բացառվել են «Տնտեսագիտություն», «Կառավարումը սոցիալական ոլորտում», «Հանրային կառավարում ու փաստաթղթավորում» և «Կառավարման փաստաթղթային ապահովում» մասնագիտությունները և հաստատվել՝ «Կառավարման տեղեկատվական համակարգեր» և «Հոդագույքային հարաբերություններ» մասնագիտությունները:

Ինչպես երևում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի և յուրաքանչյուր ուսումնական տարում առանձին մասնագիտությունների համար հատկացվող «առանց տարկետման իրավունքի, ուսման վարձի մասնակի զեղչմամբ (վճարովի)» կրթական տեղերի ծավալի վերլուծությունից (աղյուսակ 1), գործողությունների հիմքում ոչ թե աշխատաշուկայի պահանջարկը և մասնագիտությունների արդիականության ու պահանջվածության փաստարկն է, այլ թողարկող հիմնական պետական բուհերի ուղղվածությունը և որոշ մասնագիտությունների «հնչեղությունը»:

Ինչպես երևում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի և յուրաքանչյուր ուսումնական տարում առանձին մասնագիտությունների համար հատկացվող «առանց տարկետման իրավունքի, ուսման վարձի մասնակի զեղչմամբ (վճարովի)» կրթական տեղերի ծավալի վերլուծությունից (աղյուսակ 1), գործողությունների հիմքում ոչ թե աշխատաշուկայի պահանջարկը և մասնագիտությունների արդիականության ու պահանջվածության փաստարկն է, այլ թողարկող հիմնական պետական բուհերի ուղղվածությունը և որոշ մասնագիտությունների «հնչեղությունը»:

Աղյուսակ 1

ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված մասնագիտություններով և մասնագիտացումներով բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող պետական և մասնավոր (հավատարմագրված) բուհերը

Մասնագիտությունը	Բակալավրիատ	Մագիստրատուրա
Տնտեսագիտության տեսություն	ՀՊՏՀ, ԵՊՀ, Հայ-ռուս. (Սլավոնական) համ.	ՀՊՏՀ, ԵՊՀ, Հայաս. Ամերիկյան համ., Հայ-ռուս. (Սլավոնական) համ.
Կառավարում՝ ըստ մասնագիտացումների	ՀՊՏՀ, ԵՊՀ, ԵԿՏԱ, ՀԱԱՀ, Հայ-Ֆրանսիական համ., Հայ-ռուս. (Սլավոնական) համ., Հայբուսակ համ., Մխիթար Գոշ համ., Եվրասիա միջազգ. համ., Սուրբ Թերեզայի անվ. համ.,	ՀՊՏՀ, ԵՊՀ, Հայաստ. Ամերիկյան համ. ՀԱԱՀ, ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտր.
Ֆինանսներ՝ ըստ մասնագիտացումների	ՀՊՏՀ, ՀԱԱՀ, Գավառի պետ. համ., Գլաձոր համ., Մ. Մկրտչյանի անվ. տնտեսաիրավագիտական համ., ՄՖԲ ֆինանսական ակադեմիա, Մխիթար Գոշ համ., Մարտիզ համ., Եվրասիա միջազգ. համ., Հրազդանի հումանիտար ինստ., Երևանի գյուղատնտեսական համ., Սյունիք համ., Գյումրու Պրոգրես համ., Երևանի ֆինանսաբորոսայական համ., Մանց համ., Գիտելիք համալս. հիմնադրամ, Էջմիածնի Գրիգոր Լուսավորիչ համ.	ՀՊՏՀ, Հայ. Ֆրանսիական համ., Հայ-ռուս. (Սլավոնական) համ., ՀԱԱՀ, Գավառի պետ. համ., ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտր.
Կոմերցիա՝ ըստ մասնագիտացման	ՀՊՏՀ, Հայաստ. Ամերիկյան համ. (բիզն.)	ՀՊՏՀ, ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտր. (բիզն.)
Վիճակագրություն	ՀՊՏՀ	ՀՊՏՀ,
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ըստ ճյուղերի)	ՀՊՏՀ, ՀՊՃՀ, Հայաստ. Ամերիկյան համ., ԵՃՇՊՀ, Գավառի պետ.համ., Գորիսի պետ.համ., Հայբուսակ համ., Գյումրու Անանիա Շիրակացի համ., Մանց համ.	ՀՊՏՀ, ՀՊՃՀ, ԵՃՇՊՀ, Գավառի պետ.համ.

Միջազգային տնտեսական հարաբերություններ	ՀՊՏՀ, ԵԿՏԱ, Երևանի Անանիա Շիրակացի համ., Հյուսիսային համ., Մովսես Խորենացի համ.	ՀՊՏՀ, ԵԿՏԱ, Հայ-ռուս. (Սլավոնական) համ.
Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում	ՀՊՏՀ	ՀՊՏՀ
Աշխատանքի տնտեսագիտություն	ՀՊՏՀ	ՀՊՏՀ
Բնօգտագործման տնտեսագիտություն	ՀՊՏՀ, ՀՊՃՀ, ԵՃՇՊՀ, Գավառի պետ. համ.	ՀՊՏՀ, ՀՊՃՀ, ԵՃՇՊՀ, ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտր, Գավառի պետ.համ
Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ	ՀՊՏՀ	ՀՊՏՀ
Հողագույքային հարաբերություններ	ՀՊՏՀ, ՀԱԱՀ	ՀՊՏՀ
Կառավարման տեղեկատվական համակարգեր	ՀՊՏՀ, ԵՃՇՊՀ, ԵԿՏԱ, ՄՖԲ ֆինանսական ակադեմ., Գյումրու Անանիա Շիրակացի համ., Հյուսիսային համ., Մարտիզ համ., ՅուՍիԷլ համ.	ՀՊՏՀ, ԵԿՏԱ, ԵՃՇՊՀ, Գորիսի պետ.համ.,
Ապահովագրական գործ	ՀՊՏՀ, ՀԱԱՀ	ՀՊՏՀ, ՀԱԱՀ
Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	ՀՊՏՀ, Հայ. Ֆրանսիական համ., ԵՃՇՊՀ, ՀԱԱՀ, Գավառի պետ. համ., Գլաձոր համ., ՄՖԲ ֆինանսական ակադեմ., Մարտիզ համ., Մեսրոպ Մաշտոցի անվ. համ., Էջմիածնի Գրիգոր Լուսավորիչ համ., Լ. Օրբելու անվ. համ.	ՀՊՏՀ, Հայ-Ֆրանսիական համ., ՀԱԱՀ, Հայ-ռուս. (Սլավոնական) համ., ԵՃՇՊՀ, Գավառի պետ. համ.,
Ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն	ՀՊՏՀ, ՀԱԱՀ	ՀՊՏՀ, ՀԱԱՀ
Շուկայաբանություն (մարքեթինգ)	ՀՊՏՀ, Հայ-Ֆրանսիական համ., Հայ-ռուս. (Սլավոնական) համ. (գովազդ և PR), ԵԿՏԱ, ՀԱԱՀ	ՀՊՏՀ, Հայ-Ֆրանսիական համ., ԵԿՏԱ, ՀԱԱՀ, ՀԱԱՀ-Գյուղատնտ. զարգ. ամերիկ. կենտր., ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտր.

Հարկ է նկատել, որ գործատուների պահանջների և աշխատատեղայում առաջարկ-պահանջարկի հարաբերակցության անտեսումը հանգեցրել է ոչ միայն տնտեսագիտական կադրերի գերարտադրության, այլև բուհեր-գործատուներ, բուհեր-աշխատատեղայում կապերի խզման, որի հետևանքով բուհի շրջանավարտ լինելը աշխատանքով ապահովված լինելու երաշխիք չէ, քանի որ գործատուների մեծ մասը պահանջում է առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ, որոշ դեպքերում (օրինակ՝ հաշվապահություն, ֆինանսական հատվածի շատ մասնագիտություններ) պարտադիր է վերապատրաստման և համապատասխան լիցենզիաների առկայություն, իսկ առավել հաճախ առաջարկվող աշխատանքի վարձատրությունն էականորեն ցածր է համապատասխան փորձառությամբ աշխատողների վարձատրության չափից: Մյուս կողմից, գործատու-աշխատող և կրթական կազմակերպություն-աշխատատեղայում հարաբերությունների բացակայությունը հանգեցրել է նրան, որ գործատուների 60.1%-ը աշխատակիցների պակասը լրացնելու համար դիմում է աշխատանքի գործակալություններ, իսկ ավելի հաճախ՝ ՋԼՄ-ներով հայտարարություն տարածելու պրակտիկային, և միայն 5%-ն է նոր աշխատակիցներ ընտրելու նպատակով դիմում մասնագիտական ուսումնական հաստատություններ, ինչը 2010 թվականին արձանագրվել է հենց ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոնի կատարած հետազոտության արդյունքներով²:

Այս բացթողումներն էապես ազդել են նաև ՀՀ կրթական համակարգի միջազգային մրցունակության վրա: Մասնավորապես՝ թեև բարձրագույն կրթության ինդեքսի գծով ՀՀ-ն 24 կետով բարելավել է իր դիրքը, 2008 թվականի 94-ի փոխարեն 2012 թվականին զբաղեցնելով 70-րդ տեղը, սակայն տնտեսագիտական կրթության որակը բնորոշող «Կառավարման դպրոցների որակի» ցուցանիշով հետընթաց է գրանցել և 2009-2012 թթ. 135-145 երկրների

² Հայաստանում բարձրագույն կրթությամբ շրջանավարտների պահանջարկի և զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրություն, ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2011, էջ 42:

³ Իրականում 2012-2013 ուստարվա հոկտեմբերի 1-ի դրությամբ բուհական համակարգ ընդունվել են 6330 ուսանողներ, որոնցից 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ ուսումը շարունակել են 5635-ը կամ 695 ուսանող պակաս:

շարքում զբաղեցրել է ընդամենը 124-127-րդ տեղը, որը խիստ բացասական ցուցանիշ է և վկայում է տնտեսագիտական կրթության ցածր որակի մասին: Մյուս կողմից՝ եթե տվյալ շարժը համադրվի «Վերապատրաստումների ծրագրերի որակ» և «Անձնակազմի՝ վերապատրաստումների ծրագրերում ներգրավվածություն» ցուցանիշների համաչափ բարելավման հետ, ապա Համաշխարհային տնտեսական համաժողովի «Գլոբալ մրցունակության զեկույցը» ևս փաստում է այն մասին, որ ՀՀ գործարար միջավայրում տնտեսագիտական կրթություն մատուցող հաստատությունների նկատմամբ վստահությունն այնքան էլ մեծ չէ, և գործատուները կադրերի որակավորման բարձրացումը հիմնականում կազմակերպում են վերապատրաստումների միջոցով:

Աղյուսակ 2

**ՀՀ կրթական համակարգի վարկանիշը
Համաշխարհային տնտեսական համաժողովի չափումներում**

ՑՈՒՑԱՆԻՇԸ	2012-2013	2011-2012	2010-2011	2009-2010	2008-2009
Բարձրագույն կրթություն	70	76	91	96	94
Երկրորդային կրթության ներթափանցման աստիճանը բնակչության թվում (%)	50	49	68	65	65
Կրթական համակարգի որակը	79	97	115	105	98
Մաթեմատիկական և գիտական կրթության որակը	71	81	74	73	76
Կառավարման դպրոցների որակը	127	131	130	125	124
Վերապատրաստման ծրագրերի որակը	106	114	124	120	125
Անձնակազմի ընդգրկվածությունը վերապատրաստման ծրագրերում	98	105	116	114	117

Պետք է նշել, որ շրջանավարտների ինքնաիրացման բարդությունը բացասաբար է ազդել նաև բարձրագույն կրթություն ստանալ ցանկացողների նախապատվությունների վրա:


2003-2012 թթ. ՀՀ պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված, ավարտած և փնտրեսագիտական մասնագիտություններով ուսանողների թվաքանակի շարժւթւթաջը և մասնաբաժինը ընդհանուրի մեջ

Ժամանակահատված	Բուհերի քանակը որոշ պետական բուհերի վերաբերյալ	Տնտեսագիտական մասնագիտությամբ կրթված ծրագրի իրականացումը բուհերի քանակը որոշ պետական բուհերի վերաբերյալ	Ընդունվել են ուսանողներ	Տրվելու	Ընդունվել են տնտեսագիտական ուսանողներ	Տրվելու	Տնտեսագիտական մասնագիտություն	Պատասխան են ուսանողներ	Պատասխան են տնտեսագիտական ուսանողներ	Տնտեսագիտական մասնագիտություն	Պատասխան են տնտեսագիտական ուսանողներ
2003/04	-	-	21475	-	5294	-	24.65%	11698	2580	22.05%	
2004/05	-	-	22997	+7.1%	7121	+34.5%	30.96%	12214	2940	24.07%	
2005/06	89/22	38/8	24655	+7.2%	3921	-44.9%	15.89%	13296	2289	17.2%	
2006/07	87/23	37/8	25587	+3.4%	4984	+27.1%	19.42%	15516	2621	16.89%	
2007/08	85/23	37/9	26157	+2.3%	5025	+0.8%	19.21%	17863	2935	16.43%	
2008/09	90/23	34/10	27657	+5.7%	4791	-4.0%	17.32%	26107	4444	17.02%	
2009/10	77/23	31/10	26491	-4.2%	5057	+5.5%	19.08%	23552	3608	15.31%	
2010/11	74/23	31/10	26443	-0.2%	5164	+1.9%	19.52%	23935	3462	14.46%	
2011/12	68/23	31/10	7584	-	1399	-	18.44%	24930	3712	14.88%	
2012/13	65/23	31/10	26505	+0.2%	5635 ⁵	+9.1%	21.26%	---	---	---	

Աղյուսակ 3-ից երևում է, որ չնայած տնտեսագիտական մասնագիտությունների աճի միջին տրենդը համընկել է բարձրագույն կրթության դիմորդների աճի տրենդին (միջինում՝ 3.6%), սակայն վերջինը ավելի մեծ տատանումներ է արձանագրել, ինչի հետևանքով 2003-2013 թթ. ընկած ժամանակահատվածի բացարձակ աճի ցուցանիշը (6.4%) մոտ 3.7 անգամ պակաս է բարձրագույն կրթության դիմորդների բացարձակ աճի ցուցանիշից (23.4%): Նշված տատանումները հնարավորություն չեն տալիս նաև միջնաժամկետում և երկարաժամկետում հստակ կանխատեսել տնտեսագիտական մասնագիտությունների դիմորդների ներուժը (կանխատեսման արժանահավատությունը ցույց տվող ռեգրեսիայի (հետընթաց) գործակիցը զգալիորեն ցածր է արժանահավատության շեմից): Մյուս կողմից՝ ըստ աղյուսակի, բուհ ընդունված-ավարտածների և տնտեսագետ ուսանողների բացասական դինամիկան ևս տնտեսագիտական մասնագիտությունների օգտին չէ: Այսպես՝ 2003-2012 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ բուհեր ընդունվածների և ավարտածների շարժն ըստ կրթական ծրագրի տևողության կազմել է համապատասխանաբար՝ -16.8% (21475-17863), +13.5% (22997-26107), -4.5% (24655-23552) և -8.5% (26157-23935), իսկ տնտեսագիտական մասնագիտությունների համար այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է՝ -44.6% (5294-2935), -37.6% (7121-4444), -7.9% (3921-3608) և -26.1% (5025-3712): Նման պատկերը ցույց է տալիս, որ ի տարբերություն բուհական մյուս մասնագիտությունների, տնտեսագիտական կրթական ծրագրերի դիմորդներն ավելի հաճախ են ընդհատում ուսումը:

Պետք է նշել, որ տնտեսագիտական մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի նվազումը, ուսանողների կողմից ուսումն ավելի հաճախ ընդհատելու հանգամանքը, ինչպես նաև դիմորդների ավելի համեստ աճն այլ մասնագիտությունների բացարձակ աճի համեմատությամբ՝ էականորեն նվազեցրել են նաև ՀՀ բուհական համակարգում տնտեսագետ ուսանողների տեսակարար կշիռը: Մասնավորապես՝ սկսած 2005-2006 թթ.՝ նախորդ տարիների 31%-ի փոխարեն, բոլոր դիմորդների մեջ տնտեսագիտական մասնագիտություններով դիմորդների մասնաբաժինը հետագա բոլոր տարիներին տատանվել է միջինում 20%-ի սահման-

ներում: Բուին ավարտածների թվում, նախկին 23%-ի փոխարեն, տնտեսագետ մասնագետների մասնաբաժինը տատանվել է 14-17%-ի սահմաններում, իսկ բուհական համակարգում ընգրկված ուսանողների թվում այդ ցուցանիշը 24,5%-ից նվազել է՝ միջինում կազմելով 16.5% (զժ. 2):



Գծապատկեր 2. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված, ավարտած ուսանողների, փոխադասագետ ուսանողների շարժընթացը և բուհական համակարգում սովորողների մեջ փոխադասագիտական մասնագիտություններով ուսանողների մասնաբաժնի շարժընթացը 2003-2012 թթ.

Կատարված վերլուծությունից երևում է, որ եթե հետազոտության ընթացքում բացառվի ուսանողների կողմից մասնագիտությունն ըստ ապագայում արագ իրացվելու հավանականության ընտրելու հանգամանքը (ինչը դեռևս առկա է ներկայում), ապա կարելի է բուհական համակարգում տնտեսագիտական մասնագիտությամբ ուսանողների թվի վերլուծության համար վերցնել միայն հաջորդող տարիներին դպրոցն ավարտողների թիվը, դրանց նկատմամբ կիրառել աշակերտական աթոռների թափուր մնալու (միգրացիայի) գործակիցը, իսկ ստացված թվի վրա՝ բուհերի դիմորդների մասնաբաժնային միջինացված ցուցանիշը և տնտեսագիտական մասնագիտությունների նախապատվության շարժընթացի միջինացված տրենդը, ապա ստացված դիմորդների թվի վրա կիրառել տնտեսագիտական մասնագիտությունների դիմորդների միջինացված մասնաբաժնային ցուցանիշը:

Աղյուսակ 4

2007-2011 թթ. ՀՀ դպրոցների աշակերտների և շրջանավարտների շարժընթացը⁴

	Ավարտել են դպրոցը		Սովորել են դպրոցում		
	հիմնական (հզ. աշ)	միջնակարգ (հզ. աշ)	ավագ (հզ. աշ)	վարժարան (հզ. աշ)	միջնակարգ (հզ. աշ)
2007-08	47.5	50.1	-	-	431.3
2008-09	45.7	46.6	-	-	392.9
2009-10	40.8	49.1	25.1	5.2	290.0
2010-11	35.8	41.6	45.5	4.1	183.7
2011-12	---	37.8	56.6	4.8	170.1

* 2007/08 և 2008/09 ուսումնական տարիների վիճակագրությունը տարբերվում է հաջորդող երեք տարիների վիճակագրությունից՝ կապված ավագ դպրոցներ չլինելու հետ: Փաստացի՝ նախորդ սկզբունքով 2009/10 ուսումնական տարում աշակերտների թիվը կլինի՝ 320.3, 2010/11 ուսումնական տարում՝ 233.3, իսկ 2011/12 ուսումնական տարում՝ 231.5 հազար:

Աղյուսակ 4-ում պատկերված է 2007-2012 թթ. ՀՀ դպրոցների աշակերտների շարժը: Դրա միջոցով հնարավոր է ավագ դպրոցներում սովորողների հիման վրա հաշվարկել հետագա տարիներին դպրոցն ավարտողների թիվը, իսկ միջնակարգ դպրոցում սովորողների թվի հիման վրա՝ ավագ դպրոցներ փոխադրվող և

⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Վիճակագրական տարեգիրք 2009, 2010, 2011:

ավելի ուշ ժամանակահատվածներում ավարտողների շարժընթացը: Ըստ այդմ՝ բացարձակ արժեքներով կարող ենք ասել, որ 2012-2018 թթ. ՀՀ դպրոցները համապատասխանաբար կավարտեն՝ 2013-14-ին՝ 22.75, 2014-15-ին՝ 28.3, 2015-16-ին՝ 41.6, 2016-17-ին՝ 37.8, 2017-18-ին՝ 32.2 հազար աշակերտ: Պետք է նշել, սակայն, որ այս տվյալում արտացոլված է դասարանից-դասարան տեղափոխման ընթացքում աշակերտների շարժի ցուցանիշը, ինչը 2007-2011 թթ. տարեկան միջինում կազմել է -6.6%: Ելնելով սրանից՝ կարող ենք ասել, որ 2012-2018 թթ. ՀՀ դպրոցները համապատասխանաբար կավարտեն՝

- 2013-14 թթ.՝ 24.1 հազար աշակերտ,
- 2014-15 թթ.՝ 29.0 հազար աշակերտ,
- 2015-16 թթ.՝ 33.5 հազար աշակերտ,
- 2016-17 թթ.՝ 30.7 հազար աշակերտ,
- 2017-18 թթ.՝ 24.6 հազար աշակերտ:

Եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ 2003-2012 թթ. շարունակել է բարձրագույն կրթություն ստանալ աշակերտների մոտ 55%-ը, ապա կարող ենք ասել, որ բարձրագույն կրթություն ստացողների թիվը նշված տարիներին համապատասխանաբար կկազմի մոտ 13.3 հազ., 15.9 հազ., 18.4 հազ., 16.8 հազ. և 13,5 հազ. ուսանող կրթական ծրագրի առաջին կուրսում: Եվ եթե առաջին կուրս ընդունվողների նկատմամբ կիրառվի տնտեսագիտական մասնագիտություններ նախկին ժամանակահատվածներում ընդունված ուսանողների նվազագույն և առավելագույն տոկոսները, ապա կարող ենք նշել, որ տնտեսագիտական մասնագիտություններով առաջին կուրսեր կընդունվեն համապատասխանաբար մոտ՝ 2600, 2900, 3400, 3100 և 2500 ուսանողներ: Եթե հաշվի է առնվում, որ 2003-2012 թթ. տարեկան միջինում բակալավրիատի առաջին կուրս ընդունվել են 3700-3900 ուսանողներ, ապա ստացվում է, որ կանխատեսվող ժամանակահատվածում բակալավրիատի դիմորդների թիվը կկրճատվի 25-39%-ով, ինչն արդեն 2017-2018 ուսումնական տարվանից սկսած՝ բացասաբար կազդի նաև մագիստրոսական կրթության դիմորդների թվի վրա՝ հանգեցնելով բուհական երկաստիճան համակարգում կրթական ծրագրերի առաջին կուրսում սովորողների թվի մոտ 50%-ով կրճատման:

Վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տնտեսագիտական մասնագիտությունների դիմորդների թվի առումով սպասվում են զգալի բացասական տեղաշարժեր՝ պայմանավորված դպրոցներն ավարտողների թվի զգալի կրճատմամբ (եթե անգամ հաշվի չենք առնում դիմորդների նախապատվությունների հավանական փոփոխությունները՝ կապված շուկայում աշխատանք գտնելու սահմանափակ հնարավորության պատկերի հավանական պահպանման հետ):

Սակայն եթե դիմորդների ընտրության վրա ազդեն աշխատաշուկայում սեփական կարողությունների իրացման հնարավորության վերլուծության արդյունքները (մասնագիտության պահանջվածությունը և աշխատանք ունենալու հնարավորությունը), ինչպես նաև կարիերայի աճի ու վարձատրության չափի խնդիրները, ապա այդ դեպքում անհրաժեշտություն կառաջանա վերլուծելու տնտեսագետ մասնագետների մասնաբաժինը աշխատաշուկայում, նրանց վարձատրության չափը, տարիքային հոսունությունը (կապված թոշակի տարիքի հասնելու հետ), ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման հավանականությունը, որը, իր հերթին, պահանջում է վերլուծել ՀՀ Կառավարության հաստատած տարբեր ոլորտների զարգացման հայեցակարգերը:

Դիմորդների մասնագիտությունից ունեցած ակնկալիքների գնահատման նպատակով վերլուծվել է ՀՀ-ում զբաղվածների թվում տնտեսագետ մասնագետների մասնաբաժինն ու նրանց վարձատրության չափն ըստ առանձին ճյուղերի:

Աղյուսակից երևում է, որ 2008-2011 թթ. ՀՀ աշխատանքային առկա ռեսուրսներից աշխատունակ են եղել միջինում 58%-ը, որից զբաղված համարվել են մոտ 85%-ը: Դրանից բարձրագույն կրթություն ունեցել են համապատասխանաբար՝ 34%-ը, 37%-ը, 38%-ը և 41%-ը (ըստ տարիների): Փաստացի հնարավոր է արձանագրել, որ տնտեսագիտական մասնագիտությամբ կադրերի պահանջարկը պետք է դիտարկել հենց բարձրագույն կրթությամբ զբաղվածների շարժի համատեքստում: Հետազոտության շրջանակներում, բարձրագույն կրթությամբ զբաղվածների թվում տնտեսագետ կադրերի մասնաբաժնի գնահատման նպատակով, իրականացվել է հարցում տնտեսության տարբեր ոլորտների գործատուների շրջանում (հաշվի առնելով դրանց կազմակերպաիրավական ձևը և չափերը):

Աղյուսակ 5

**Աշխատանքային ռեսուրսների և զբաղվածության շարժընթացը
ՀՀ-ում 2008-2011 թթ.՝ ըստ բարձրագույն կրթության,
զբաղվածության բնույթի և տնտեսական գործունեության ոլորտի⁵**

Ցուցանիշը	2008	2009	2010	2011
Աշխատանքային ռեսուրսներ (մլն)	2.376	2.397	2.389	2.286
Աշխատունակ բնակչություն (մլն)	1.414	1.418	1.463	1.440
Զբաղվածներ (հազ.)	1.183	1.152	1.185	1.175
Բարձրագույն կրթություն ունեցող զբաղվ. (հազ.)	398.2	421.7	444.9	486.6
Վարձու աշխատողներ (հազ.)	686.6	655.3	673.9	613.0
Գործատուներ (հազ.)	4.9	6.3	6.1	7.5
Մանրամեծածախ առևտուր (հազ.)	103.2	92.6	109.2	111
Փոխադրումների կառավարում (հազ.)	2.5	3.8	6.8	7.7
Կացության և հանրային սննդի կառավ. (հազ.)	2.3	2.1	2.9	3.2
Ֆինանս. և ապահովագր. գործ (հազ.)	8.9	10.6	12.5	9.0
Մասնագիտ. և գիտ. գործունեություն (հազ.)	16.8	17.2	18.8	19.7
Վարչ. և օժանդակ գործունեություն (հազ.)	7.5	8.2	8.8	10.2
Պետական հատված (հազ.)	4.5	4.8	5.1	5.4

Աղյուսակ 6-ի տվյալները ցույց են տալիս, որ տնտեսագիտական մասնագիտությամբ անձինք (տնտեսագիտական բնույթի աշխատանք իրականացնող անձինք) կազմում են աշխատաշուկայում բարձրագույն կրթությամբ զբաղվածների միջինում 15-20%-ը կամ 73000-98000 մարդ, որոնցից միայն 10%-ի վարձատրության ակնկալիքները կարող են միջինում երկու և ավելի անգամ բարձր լինել ՀՀ-ում բարձրագույն կրթությամբ աշխատողների միջին աշխատավարձի ցուցանիշից (2011 թ. դրությամբ՝ 95790 դրամ): Պետք է նշել, սակայն, որ ըստ նույն հարցման արդյունքների, որոշ դեպքերում, ինչպես ընկերությունների առևտրային անձնակազմում աշխատանքի անցնելը, ապահովագրական կամ գովազդային գոր-

⁵ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Վիճակագրական տարեգիրք 2012, 2011, 2010, 2009:

ծակալ լինելը հաճախ չի պահանջում բարձրագույն մասնագիտական կրթություն:

Աղյուսակ 6

**ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում տնտեսագետ մասնագետների
մասնաբաժինը և նրանց վարձատրության չափը**

Զբաղվածության ոլորտը	Մասնաբաժինն ընդհ. զբաղվ. մեջ	Միջին աշխատավարձը՝ ՀՀ դրամ
Գյուղատնտեսության հատվածի ընկերությունների կառավարում և կառավարչական սպասարկում	3.9	150.000
Հանքարդյունաբերության ձեռնարկությունների կառավարում և կառավարչական սպասարկում	1.3	237.000
Մշակող արդյունաբերության ձեռնարկությունների կառավարում և կառավարչական սպասարկում	2.7	202.000
Էլ. էներգիայի և գազի արտադրության ձեռնարկությունների կառավարչական սպասարկում	0.9	153.000
Զրամատակարարման և ջրահեռացման ընկերությունների կառավարչական սպասարկում	0.3	160.000
Շինարարության ոլորտի ընկերությունների կառավարում և կառավարչական սպասարկում	0.1	237.000
Մեծածախ և մանրածախ առևտրային ընկերությունների կառավարում և կառավարչական սպասարկում:	6.5	190.000
Փոխադրումների ոլորտի ընկերությունների կառավարում և կառավարչական սպասարկում	0.7	173.000
Կացության և հանր. սննդի կազմակերպման ընկերությունների կառավարում և կառավարչական սպասարկում	0.7	170.000
Տեղեկատվություն և կապ	1.5	228.000
Ֆինանսական հատվ. և ապահովագրություն	0.8	284.000
Անշարժ գույքի վաճառք	0.2	152.000
Գիտական և գիտատեխնիկական գործունեություն	1.7	118.000
Վարչական և օժանդակ գործունեություն	0.9	93.000
Օտարերկրյա կազմակերպությունների ներկայացուցչություններ	0.2	202.000
Կազմակերպությունների իրացման ստորաբաժանումների անձնակազմ	5.2	200.000
Խորհրդատվական ծառայություններ մատուցող ընկերությունների անձնակազմ	0.2	300.000

Նշված վերլուծությունն իրականացվել է նաև պետական պաշտոնական տեղեկատվության հիման վրա: Տվյալ դեպքում տարբեր

ուրտներում պաշտոնապես զբաղվածների թվի վրա կիրառվել են տնտեսագետ մասնագետների համապատասխան ներգրավվածության գործակիցները՝ ստանալով հարցման արդյունքներից մոտ 5%-ի շեղում, ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ 2011 թ. դրությամբ ՀՀ աշխատանքի շուկայում աշխատանք ունեցող տնտեսագետների թիվը տատանվել է 82000-87000-ի սահմաններում:

Աղյուսակ 7

Ջբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների և կրթության⁶

	Ընդամենը, 1000 մարդ		Նախամասնագիտական (արհեստագործ.) և բարձր	
	2010	2011	2010	2011
Ընդամենը	1185.2	1175.1	578.8	601.6
Գյուղատնտեսություն	457.4	457.4	120.3	122.2
Արդյունաբերություն	120.6	128.7	62.9	72.0
Շինարարություն	85.8	67.4	32.5	24.0
Առևտուր, նորոգում, կացության և հանրային սննդի կազմակերպում	128.4	123.9	66.2	68.0
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, տեղեկատվություն և կապ	70.6	65.8	41.7	42.1
Ֆինանսական, անշարժ գույքի, մասնագիտական, գիտատեխնիկական, վարչարարական և օժանդակ գործունեություն	43.5	40.7	34.5	35.2
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	235.0	242.8	192.1	206.3
Այլ ծառայություններ	43.9	48.5	28.7	31.9

Հատկանշական է, որ տնտեսագետ մասնագետների առկա բեռնվածքը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս շրջանավարտների ակնկալիքների և ՀՀ աշխատաշուկայում՝ տնտեսագետ կադրերի կլանման ներուժի մասին: Այդ նպատակով անհրաժեշտ է վերլուծել նաև զբաղվածության մակարդակն ըստ կրթության աստիճանի, զբաղվածության տարիքային բեռնվածքը (ընդ-

⁶ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2007-2011, Երևան, 2012:

հանուր և ըստ ճյուղերի) և հնարավոր աշխատատեղերի առաջացման ուղրտներն ու դրանց մեջ տնտեսագիտական մասնագիտությունների հավանական մասնաբաժինները:

Աղյուսակ 8

Ջբաղվածության մակարդակն ըստ կրթության⁷

	Ընդամենը, %	
	2010	2011
Ընդամենը	49.6	51.4
Բարձրագույն, հետբուհական	60.5	60.6

Աղյուսակ 8-ից երևում է, որ բարձրագույն կրթությամբ աշխատանքային ռեսուրսների զբաղվածությունը՝ զբաղվածության միջին ցուցանիշից բարձր է մոտ 10%-ով: Ըստ այդմ հնարավոր է արձանագրել, որ 2010-2011թթ ժամանակահատվածում բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում գործազրկության մակարդակը տատանվել է 40%-ի սահմաններում, ինչը հնարավոր է տարածել նաև բարձրագույն տնտեսագիտական մասնագիտություն ունեցողների վրա: Մյուս կողմից պետք է նշել, որ բարձրագույն կրթությամբ կադրերն աշխատաշուկայում առավել խոցելի են մյուս աշխատանքային ռեսուրսների համեմատ և ավելի հաճախ են գործազրկությունից խուսափելու նպատակով համաձայնում ստանձնել իրենց որակավորմանը չհամապատասխանող աշխատանք:

Աղյուսակ 9

Ջբաղվածության և սրացած որակավորման համապատասխանության համապատկերը ՀՀ աշխատաշուկայում⁸

	Ընդամենը՝ 1000 մարդ		Աշխատանքը համապատ. է որակավորմանը		Աշխատանքը որակավորումից ցածր է		Աշխատանքը որակավորումից բարձր է	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	1185.2	1175.1	1008.4	1024.7	171.3	147.1	5.5	3.3
Բարձրագույն, հետբուհական	269.2	294.9	208.7	239.9	60.5	54.8	...	0.2

⁷ Նույն տեղում:

⁸ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2007-2011, Երևան, 2012:

Աղյուսակ 9-ից երևում է, որ աշխատանքային ռեսուրսների միջին ցուցանիշի համեմատությամբ բարձրագույն կրթությամբ կադրերի կատարած աշխատանքի և որակավորման համապատասխանությունը մոտ 10%-ով ցածր է: Այսպես՝ եթե 2010 թվականին զբաղվածների 85%-ը համարել է, որ իր աշխատանքը համապատասխանում է իր ստացած որակավորմանը, և միայն 4.5%-ի կարծիքով՝ ցածր է իրենց որակավորումից, ապա բարձրագույն կրթությամբ կադրերի միայն 77%-ն է համարել, որ իր կատարած աշխատանքը համապատասխանում է իր որակավորմանը, իսկ 22.3%-ի կարծիքով՝ կատարում է իր որակավորումից ցածր աշխատանք: 2011 թվականին որակավորման համապատասխանության և որակավորումից ցածր լինելու ցուցանիշը բոլոր զբաղվածների և բարձրագույն կրթությամբ զբաղվածների շրջանում կազմել է՝ 87%, 12.5%, 69%, 18.6%: Նման շեղումը վկայում է, որ թեև բարձրագույն կրթություն ունեցողների գործազրկության ցուցանիշը միջին ցուցանիշից մոտ 10%-ով ցածր է, սակայն նրանց զբաղվածության մեջ «մասնագիտական գործազրկության» մակարդակը միջինից էականորեն բարձր է: Պետք է նշել, որ նման պատկերը ևս զսպող դեր կխաղա բարձրագույն կրթություն ստանալու որոշման և մասնագիտության ընտրության հարցում:

Աղյուսակ 10

Զբաղվածներն ըստ տարիքային խմբերի և կրթության⁹

	Ընդամենը, 1000 մարդ		Բարձրագույն, հեղբուհական	
	2010	2011	2010	2011
Ընդամենը	1185.2	1175.1	269.2	294.9
15-24	120.5	113.0	22.0	27.6
25-34	245.3	239.2	67.6	79.6
35-44	241.6	236.9	52.6	64.3
45-54	318.5	312.2	70.0	67.3
55-64	186.2	189.8	46.6	44.3
65-75	73.1	84.0	10.4	11.8

⁹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2007-2011, Երևան, 2012:

Բարձրագույն կրթության մասնագիտությունների ընտրության հարցում էական դերակատարում կարող է ունենալ աշխատաշուկայում կադրերի կլանման մակարդակը: Այդ նպատակով հետազոտության ընթացքում վերլուծվել է նաև զբաղվածների բաշխումն ըստ տարիքային խմբերի:

Աղյուսակ 10-ից երևում է, որ մոտ հինգ տարիների կտրվածքով բարձրագույն կրթություն ունեցող զբաղվածների շրջանում թոշակի անցման հետ կապված աշխատատեղերի առաջացման հավանականությունը կազմում է մոտ 11800 աշխատատեղ (ներկայումս զբաղված համարվող 65-75 տարեկանները), որից, հաշվի առնելով տնտեսագետների մասնաբաժինը, բարձրագույն տնտեսագիտական կրթություն պահանջող թափուր աշխատատեղերի թիվը կկազմի 1800-2400 տեղ կամ տարեկան 300-800 աշխատատեղ: Ավելի մեծ է 2018 թվականից հետո թափուր աշխատատեղերի (թոշակի անցմամբ պայմանավորված կամ ներկայումս զբաղված համարվող 55-64 տարեկանները) առաջացման հավանականությունը, որը, հինգ տարվա կտրվածքով, կազմում է մոտ 8900 կամ տարեկան միջինում՝ 1800 աշխատատեղ: Եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ մոտակա հինգ տարիների ընթացքում բուհական համակարգի շրջանավարտների թիվը կմնա բարձր և կտատանվի 3500-4000-ի սահմաններում, ապա 2015-2018 թթ. պատրաստված տնտեսագետներն առնվազն 10-20 անգամ ավելի շատ կլինեն, քան աշխատաշուկայում կադրերի կլանման ներուժը: Հաջորդող տարիներին ցուցանիշը կբարելավվի՝ ընդհուպ մոտենալով առաջարկ-պահանջարկի նորմալ հարաբերակցությանը: Հատկանշական է, որ կադրերի կլանմանն առավել հակված և հիմնականում միջին աշխատավարձը գերազանցող ոլորտներում պատկերն ավելի բացասական է:

Աղյուսակ 11-ից ակնհայտ է, որ տնտեսագետ կադրերի կլանմանն առավել հակված և համեմատաբար աշխատանքի բարձր վարձատրություն ունեցող ոլորտներում (առևտուր, լոգիստիկա, կապ, ֆինանսական, գիտատեխնիկական և վարչարարական գործունեության ոլորտներ), կադրերի ծերացմամբ պայմանավորված, թափուր աշխատատեղերի առաջացման հնարավորություններն ավելի սահմանափակ են, քանի որ դրանցում գերակշռում են (մոտ

70%) 25-54 տարեկանները: Այսինքն՝ կարող ենք ընդգծել, որ նշված ոլորտները համեմատաբար «երիտասարդ» են: Տպավորիչ աճ հնարավոր է ակնկալել միայն պետական կառավարման համակարգում, որտեղ մոտակա հինգ և տասը տարիներին, կադրերի ծերացմամբ պայմանավորված, թափուր աշխատատեղերի առաջացման հավանականությունը մոտ երկու անգամ գերազանցում է նշված ոլորտների միացյալ ցուցանիշը:

Պետք է նշել, որ կատարված կանխատեսման հավաստիության գնահատման նպատակով հետազոտության ընթացքում վերլուծվել են նաև տնտեսության տարբեր հատվածներում աշխատուժի շարժի դինամիկան 2007-2011 թթ.:

Աղյուսակ 12-ից ակնհայտ է, որ 2007-2011 թթ. աշխատանքից ազատված և աշխատանքի ընդունված կադրերի շարժը միմյանց բավական մոտ են: Ճիշտ է, ընդունվողների թիվը գերազանցել է ազատվողներինը, որը հնարավոր է բացատրել նաև նոր աշխատատեղերի ստեղծմամբ:

Հետազոտության ընթացքում մեր կողմից վերլուծվել են նաև ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների զարգացման հայեցակարգերը՝ պարզելու համար 2014-2018 թթ. ոլորտների զարգացմամբ կանխատեսվող աշխատատեղերի առաջացման ծավալը: Պետք է նշել, որ հիմնականում աշխատատեղերի և մասնավորապես՝ բարձրագույն տնտեսագիտական մասնագիտություններով աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները բարձր են գնահատվել ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի և հեռահաղորդակցությունների, զբոսաշրջության, ծառայությունների և առևտրի հատվածներում: Սակայն ծրագրերով նախատեսված պլանային միջնաժամկետ ցուցանիշների վերլուծությունը ցույց տվեց, որ 2007-2008 թթ. ընթացքում մշակված հայեցակարգերի միջնաժամկետ ցուցանիշները (նախատեսված 2012-2013 թվականների համար) մոտ կիսով չափ թերակատարվել են: Վերջինը նվազեցնում է դիտարկված ոլորտներում աշխատուժի աճի հետ կապված կանխատեսումների հավանականությունը: Մյուս կողմից՝ պետք է նշել, որ հատկապես ՏՏ ոլորտում կադրերին ներկայացվում են նաև տեխնիկական գիտելիքների պահանջներ, և այնտեղ կառավարչական անձնակազմի աճը ներկայումս ՀՊՏՀ թիրախում չի գտնվում:

Աղյուսակ 11
Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների և տարիքային խմբերի

	Ընդամենը, 1000 մարդ		15-24		25-34		35-44		45-54		55-64		65-75	
	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	1185.2	1175.1	120.5	113.0	245.3	239.2	241.6	236.9	318.5	312.2	186.2	189.8	73.1	84.0
Գյուղատնտեսություն	457.4	457.4	45.3	38.5	62.4	59.6	95.5	84.3	121.6	132.2	72.6	77.6	60.2	65.2
Արդյունաբերություն	120.6	128.7	11.0	14.6	27.8	28.0	20.2	25.3	37.7	34.9	21.6	22.2	2.2	3.7
Շինարարություն	85.8	67.4	9.1	6.9	25.6	18.4	17.6	12.6	22.0	18.0	10.4	9.9	1.1	1.7
Առևտուր, նորոգում, կազմության և հանրային սննդի կազմակերպում	128.4	123.9	16.0	16.4	33.5	34.5	30.9	26.5	29.8	28.6	16.5	15.5	1.7	2.4
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, տեղեկատվություն և կապ	70.6	65.8	7.2	5.1	16.5	18.3	12.9	12.2	23.1	19.5	10.6	9.8	0.3	0.8
Ֆինանսական, անշարժ գույքի, մասնագիտական, գիտատեխնիկական, վարչարարական և օժանդակ գործունեություն	43.5	40.7	7.7	6.0	12.6	12.0	7.1	8.9	9.3	7.3	5.5	5.0	1.3	1.5
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության տրցիայական սպասարկում	235.0	242.8	17.0	18.4	54.8	55.2	49.0	57.4	63.8	60.4	44.4	43.8	6.0	7.7
Այլ ծառայություններ	43.9	48.5	7.1	7.1	12.1	13.3	8.5	9.6	11.2	11.3	4.7	6.0	0.3	1.1

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2007-2011, Երևան, 2012:

Աշխատուժի շարժն ըստ տնտեսության ոլորտների¹¹

	Ընդունվել են աշխատողներ					Ազատվել են աշխատողներ				
	2007	2008	2009	2010	2011	2007	2008	2009	2010	2011
Ընդամենը	19.4	20.1	18.5	20.4	21.7	17.6	20.1	18.3	18.7	19.7
Գյուղատնտեսություն	57.6	49.4	42.4	66.7	56.5	53.0	37.5	25.1	65.9	52.0
Արդյունաբերություն	30.7	28.4	25.0	27.2	27.4	29.3	32.9	26.7	25.0	24.7
Շինարարություն	77.1	65.6	71.5	89.6	60.8	62.7	67.6	73.1	83.0	72.7
Ծառայություններ	13.4	15.1	14.0	14.3	13.8	12.0	13.9	13.4	12.9	11.8
Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, տեղեկատվություն և կապ	13.3	17.8	17.9	11.1	21.6	16.4	19.3	19.1	12.0	23.0
Ֆինանսական, անշարժ գույքի, մասնագիտական, գիտատեխնիկական, կարգադրական և օժանդակ գործունեություն	31.0	25.1	15.6	27.9	31.4	17.8	14.6	14.8	17.1	17.2
Կրթություն	9.4	10.4	10.1	10.8	11.2	9.3	9.6	8.8	10.0	9.4
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական ապաստարկում	7.9	8.8	6.8	8.4	8.5	6.8	9.5	7.9	8.5	7.4
Այլ ծառայություններ	19.6	21.3	20.3	19.6	26.0	16.2	19.0	19.2	17.4	22.6

¹¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2007-2011, Երևան, 2012:

Ինչպես արդեն նշվել է, մասնագիտության ընտրության կարևոր փոփոխական կարող է լինել ոչ միայն ապագայում եկամտի ստացման հնարավորությունը, այլև, որ ավելի կարևոր է, դրա չափին առնչվող խնդիրը: Տվյալ դեպքում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ կադրերի եկամտային ակնկալիքները բարձր են ինչպես միջին եկամտի, այնպես էլ բարձրագույն կրթությամբ զբաղվածների միջին եկամտի չափից:

Աղյուսակ 13

Միջին ամսական եկամուտն ըստ կրթական մակարդակի և տարիքային խմբերի¹²

	Ընդամենը	
	2010	2011
Միջին եկամուտ	72425	78408
Բարձրագույն, հետբուհական	97041	95794
15-24	68701	74365
25-34	79892	85927
35-44	75624	84990
45-54	74047	76790
55-64	69155	74565
65-75	39909	53297

Աղյուսակ 13-ից ակնհայտ է դառնում, որ Հայաստանում զբաղվածների միջին եկամուտը 2011 թ. դրությամբ կազմել է մոտ 80.000, իսկ բարձրագույն կրթություն ունեցողներինը՝ 95.000 դրամ: Բացի այդ, սույն հետազոտության ընթացքում անցկացված հարցումների արդյունքներից պարզվեց, որ բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ կադրերի մոտ 45%-ի միջին աշխատավարձը տատանվում է 100.000-120.000, մոտ 35%-ինը՝ 150.000-200.000, մոտ 15%-ինը՝ 250.000-350.000 դրամի սահմաններում, իսկ մոտ 5%-ի միջին աշխատավարձը բարձր է 350.000 դրամից: Նման պատկերից ակնհայտ է, որ բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների եկամտի ակնկալիքները մոտ երկու անգամ կարող են բարձր լինել այլ բարձրագույն կրթությամբ մասնագետների միջին ակնկալիքից, ինչը սակայն դիմորդների

¹² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2007-2011, Երևան, 2012:

նախապատվությունների վրա ազդեցության տեսանկյունից չեզոքացվում է՝ պայմանավորված որակավորմանը համարժեք աշխատանք գտնելու բարդություններով:

Այս առնչությամբ, հետազոտական ծրագրի շրջանակներում, գործատուների կողմից ներկայացվող աշխատանքի առաջարկների և մասնավորապես՝ որակավորված տնտեսագետ պահանջող առաջարկների մշտադիտարկման և վերլուծության միջոցով, հնարավոր է պարզել, թե որ մասնագիտություններն են առավել պահանջված ՀՀ-ում, դրանց մեջ ինչ տեսակարար կշիռ ունեն տնտեսագիտական մասնագիտությունները և գործատուներն ինչպիսի պահանջներ են առաջադրում տնտեսագետ կադրերին: Մշտադիտարկման ենթարկվել են careercenter.am, jobfinder.am, tanger.am, ashxatanq.net, job.am, hr.am, myjob.am, banks.am, kadrer.ru, rabota.am, list.am, igind.am, ijob.am կայքերում թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունները:

Մշտադիտարկման արդյունքներով ՀՀ-ում բաժրագույն կրթությամբ ամենապահանջվածներն են SS ոլորտի և տնտեսագիտական կրթությամբ մասնագետները: Այսպես՝ ուսումնասիրված կայքերից երեքում՝ այցելուների ամենամեծ թիվ ունեցողներում (careercenter.am, hr.am, jobfinder.am), 06.11.13 թ. դրությամբ տեղադրված 555 հայտարարություններից 250-ը (45%) SS ոլորտի մասնագետների թափուր հաստիքների, 180-ը (32%)՝ տնտեսագետների, 125-ը (23%)՝ այլ մասնագիտությունների վերաբերյալ (իրավաբաններ, բժիշկներ, թարգմանիչներ և այլն) հայտարարություններն են եղել: Ստորև աղյուսակում SS ոլորտի մասնագետների և տնտեսագետների թափուր հաստիքների վերաբերյալ հայտարարությունների բաշխվածությունն է՝ ըստ կայքերի:

Աղյուսակ 14

Աշխատանքի հրավերի բաշխվածքը առաջադար կայքերում

Մասնագետներ	Կայքը			Ընդամենը
	careercenter.am	jobfinder.am	hr.am	
SS մասնագետներ	34	69	147	250
Տնտեսագետներ	35	97	48	180
Այլ	40	63	22	125
Ընդամենը	109	229	217	555

Հատկանշական է, որ բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետներից ամենամեծ պահանջարկն ունեն մարքեթինգի ու վաճառքի մասնագետները (28%), հաշվապահներն ու աուդիտորները (27%) և ֆինանսիստները (9%):

Ըստ տնտեսության ճյուղերի՝ տնտեսագիտական մասնագիտությունների թափուր աշխատատեղերի բաշխվածքն ունեցել է հետևյալ տեսքը.

- մեծածախ, մանրածախ առևտուր և հանրային սնունդ՝ 33%,
- ֆինանսական ծառայություններ՝ 28%,
- արտադրություն՝ 15%,
- SS ոլորտ՝ 9%,
- զբոսաշրջություն՝ 6%,
- շինարարություն՝ 5%,
- այլ ծառայություններ՝ 4%:

Մարքեթինգի և վաճառքի մասնագետների հաստիքները թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններում հանդիպել են հետևյալ անվանումներով. մարքեթինգի բաժնի ղեկավար, մարքեթինգի ղեկավար, բրենդ-մենեջեր, ապրանքագետ-բրենդի մասնագետ, մարքեթինգի բաժնի պատասխանատու, պրոդուկտ մենեջեր, մարքեթինգի և վաճառքի մասնագետ, մարքեթինգ-մենեջեր, մարքեթինգի մասնագետ, մարքեթոլոգ, վաճառքի և սպասարկման կենտրոնի մասնագետ, վաճառքի խմբի ղեկավար, վաճառքի մենեջեր-դեպարտամենտի ղեկավար, վաճառքի մենեջեր-պրեսելեր, վաճառքի մենեջեր, վաճառքի պատասխանատու, վաճառքի մասնագետ, շուկայի զարգացման մասնագետ, կորպորատիվ վաճառքների մենեջեր, ներմուծման և արտահանման գծով մասնագետ, մերչնդայզեր, գովազդի մենեջեր, PR մենեջեր: Հաշվապահների և աուդիտորների հաստիքները թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններում հանդիպում են հետևյալ անվանումներով. գլխավոր հաշվապահ, հաշվապահ, հաշվապահի օգնական, հաշվապահ-հաշվետար, հաշվետար, հարկային մասնագետ, աուդիտոր, ներքին աուդիտոր, ներքին աուդիտի անդամ, աուդիտի մասնագետ և այլն: Ֆինանսիստների հաստիքները թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններում հանդիպում են հետևյալ անվանումներով. գլխավոր

Ֆինանսական տնօրեն, ֆինանսական տնօրեն, ֆինանսական վերլուծաբան, ֆինանսական խորհրդատու:

Բացի հայտարարությունների վերլուծությունից, իրականացվել է նաև տարբեր հաստիքներին գործատուների կողմից ներկայացվող պահանջների շրջանակը:

Այսպես՝ ՀՀ-ում գլխավոր գործադիր տնօրեններին ներկայացվող հիմնական պահանջներն են. ենթակա ստորաբաժանումների ղեկավարների հետ աշխատանքի փորձը, կորպորատիվ միջավայրում աշխատելու փորձը, ստեղծագործ մտածելակերպը, խնդիրները լուծելու և որոշումներ կայացնելու հմտությունները, հաղորդակցման, վերլուծական և ֆինանսական հմտությունները, կազմակերպչական, պլանավորման և ղեկավարման գերազանց հմտությունները, առաջնորդման գերազանց հմտությունները, սթրեսային իրավիճակներում, ընդհատումներով և սեղմ ժամկետներում աշխատելու ունակությունը, բարձր մոտիվացված և դեպի արդյունքը կողմնորոշված անձնավորություն լինելը, պրեզենտացիոն և բանակցությունների վարման գերազանց հմտությունները, հայերենի, ռուսերենի և անգլերենի գերազանց իմացությունը, MS Office (Excell, Word, Power Point, Acces), 1C և CRM ծրագրերի իմացությունը:

Գլխավոր գործադիր տնօրենի հիմնական պարտականություններն են՝ ապրանքի մշակման ֆինանսական ասպեկտների գնահատումը և մարքեթինգային բյուջեի սահմանումը, բիզնեսի զարգացման նորաստեղծական մոտեցումների և մոդելների մշակումը, բիզնեսի աճի ռազմավարությունների մշակումը, բիզնեսի զարգացման թիմի ձևավորումը և ղեկավարումը, խնայողական ռազմավարությունների մշակումը, բիզնես-պլանների մշակումը և դրանց իրականացման ու նոր շուկաներ ներթափանցման կոորդինացումը, ընկերության երկարատև զարգացման ռազմավարության մշակումը, ներքին հաղորդակցման մշակույթի ներդրումը և զարգացումը:

ՀՀ խոշոր կազմակերպություններում մարքեթինգի, հետազոտությունների, վերլուծությունների և պլանավորման դեպարտամենտի ղեկավարին ներկայացվող հիմնական պահանջներն են՝ բարձրագույն կրթությունը մարքեթինգի, տնտեսագիտության կամ մաթեմատիկայի բնագավառներում, առնվազն երեք տարվա աշ-

խատանքային փորձը համապատասխան ոլորտում, առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձը ղեկավար պաշտոնում, մարքեթինգային վերլուծության և պլանավորման հիմունքների իմացությունը, աշխատանքային փորձը տնտեսական ցուցանիշների պլանավորման և բյուջեի ձևավորման ոլորտում, հեռահաղորդակցման ոլորտի և համացանցի վերաբերյալ խորքային գիտելիքները, մարքեթինգային հետազոտությունների արդյունքների վերլուծության փորձը, վերլուծական հաշվետվությունների կազմման փորձը, վիճակագրական մոդելավորման փորձը, վերլուծական հմտությունների, մաթեմատիկայի և վիճակագրության գերազանց իմացությունը, հաշվետվությունների կազմման, բիզնես-նամակագրության և պրեզենտացիոն ունակությունները, նախագծերի կառավարման հմտությունները, կազմակերպչական և առաջնորդման ունակությունները, թիմային աշխատանքի կազմակերպման ունակությունները, առաջնայնությունների սահմանման և կոնֆլիկտային իրավիճակներում որոշումների կայացման հմտությունները, հաղորդակցման հմտությունները, սթրեսակայունության և ժամանակի կառավարման հմտությունները, նախաձեռնողականությունը և ճկունությունը, ժամանակակից համակարգչային գիտելիքները, հայերենի, ռուսերենի և անգլերենի ազատ տիրապետումը: Մարքեթինգի ղեկավարի աշխատանքային պարտականություններն են՝ ընկերության բյուջետավորման գործընթացների իրականացումը, բիզնեսի և ընդհանուր ոլորտի զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ պլանների մշակումը, մարքեթինգային արդյունավետության առանցքային ցուցանիշների պլանավորումը, վերլուծությունը, վերահսկողությունը և մարքեթինգային վերլուծական գործունեության իրականացումը, ներքին հաշվետվական համակարգերի զարգացումը և պարբերական հաշվետվությունների պատրաստումը, շուկայի մրցակցային իրավիճակի վերլուծությունը, շուկայի զարգացման միտումների կանխատեսումը, մարքեթինգային հետազոտությունների իրականացումը և վերլուծական հաշվետվությունների նախապատրաստումը:

Մարքեթինգի մասնագետին ներկայացվող հիմնական պահանջներն են՝ բարձրագույն կրթությունը տնտեսագիտության, մարքեթինգի կամ հարակից ոլորտներում, առնվազն երեքից հինգ տար-

վա աշխատանքային փորձը մարքեթինգի ոլորտում, բիզնեսի զարգացման փորձը, ստեղծագործական և վերլուծական մտածողությունը, շփման հմտությունները, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացությունը, համակարգչային գերազանց հմտությունները (MS Word, MS Excel, Outlook, Internet), վարորդական իրավունքը, (իսկ սեփական մեքենայի առկայությունն առավելություն է): Մարքեթինգի մասնագետի հիմնական պարտականություններն են՝ ընկերության մարքեթինգային ռազմավարության մշակումը և իրականացումը, շուկայի հետազոտությունների իրականացումը, նոր հաճախորդների բացահայտումը և ներգրավումը, հաճախորդների տվյալների բազայի ստեղծումը և մեծացումը, PR մասնագետի հետ միասին ընկերության PR ռազմավարության մշակումը և իրականացումը, գովազդային նյութերի ստեղծումը, միջոցառումների կազմակերպումը, ընկերության, դրա արտադրանքի և ծառայությունների ներկայացումը տարբեր միջոցառումներում և ցուցահանդեսներում, աուսոռոսինգի պատվերների կատարումը և բանակցությունների վարումը ընկերության կորպորատիվ ոճի և տարբերանշանների մշակումը:

Ֆինանսական տնօրենին ներկայացվող պահանջներն են՝ առնվազն չորսից հինգ տարվա աշխատանքային փորձը համապատասխան ոլորտում որպես ֆինանսական տնօրեն, տվյալ ոլորտի իմացությունը, հաշվապահական, ֆինանսական և վերլուծական գերազանց հմտությունները՝ ներառյալ աշխատանքային փորձը կանխիկի կառավարման, կանխատեսման, եկամուտների կառավարման, բյուջետավորման և նախագծերի կառավարման ոլորտներում, աշխատանքային փորձը բիզնեսի զարգացման միտումների բացահայտման, նոր բիզնես-նախագծերի իրականացման, ֆինանսական ցուցանիշների բարելավման ոլորտներում, անձնակազմի ղեկավարման փորձը նախընտրելի է, բակալավրի աստիճան հաշվապահության, ֆինանսների, բիզնեսի կազմակերպման կամ հարակից այլ ոլորտներում, MBA-ը, ACCA-ի որակավորումը նախընտրելի են, համակարգչային հմտություններ, ռուսերենի և անգլերենի գերազանց իմացություն: <<-ում ֆինանսական տնօրենի հիմնական պարտականություններն են. բիզնես-պլանի մշակումը և իրականացումը՝ հիմնական շեշտը դնելով ֆինանսական և հաշվապահական գործառնությունների իրականացման և

ֆինանսական արդյունքների ներկայացման վրա, շահութաբերության և եկամուտների աճի առումով ընկերության նպատակների կատարմանը նպաստելը, բիզնեսի ընդհանուր արդյունավետության բարձրացման համար միջգործառնական խմբերի աշխատանքներին մասնակցությունը, օրինակ՝ եկամուտների, մարքեթինգի և վաճառքների կառավարում, բիզնեսի հավասարակշռված ցուցանիշների մշակում և ներդրում, շրջանառու կապիտալի, դրամական հոսքերի, ընդհանուր ծախսերի կառավարում, ռիսկերի բացահայտում և կառավարում:

Վաճառքի տնօրենին ներկայացվող հիմնական պահանջներն են՝ բարձրագույն կրթությունը տնտեսագիտության, բիզնեսի կառավարման, մարքեթինգի կամ այլ հարակից ոլորտներում (մագիստրոսի կոչում), առնվազն վեց տարվա աշխատանքային փորձը մանրամեծածախ առևտրի ոլորտում, վաճառքի բաժնում, առնվազն երեքից հինգ տարվա աշխատանքային փորձը վաճառքների բաժնի ղեկավարի պաշտոնում, աշխատանքային փորձը պատվերների ընդունման ավտոմատացված համակարգերով, հայերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացությունը, անգլերենի իմացությունը ցանկալի է, անձնական մեքենայի առկայությունը ցանկալի է, Բ, Ց կարգի վարորդական իրավունքի առկայություն, համակարգչից օգտվելու գերազանց հմտությունները, մասնավորապես՝ MS Office ծրագրային փաթեթ, ղեկավարման, բանակցությունների վարման, կոնֆլիկտների կառավարման գերազանց հմտությունները: Վաճառքի տնօրենի հիմնական աշխատանքային պարտականություններն են՝ ընկերության վաճառքների բաժնի աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը, վաճառքների շուկայի ընդլայնմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը, ընկերության վաճառքների ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան պլանների կազմումը և վերանայումը, ընկերության վաճառքների հաշվետվությունների կազմումը և ներկայացումը ընկերության ղեկավար անձնակազմին, մասնակցությունը ընկերության վաճառքների ծավալների ավելացմանն ուղղված միջոցառումների մշակմանն ու իրականացմանը, մանրածախ և մեծածախ գործընկերների ցանցի ընդլայնման ապահովումը, ընկերության վաճառքի պլանների համաձայն՝ վաճառքի ծավալի ավելացումը, վաճառքի բաժնի անձնակազմի համալրումը, վաճառքի

բաժնի աշխատանքի վերահսկումը, ինչպես նաև աշխատանքի ընթացքում ծագող խնդիրների լուծումը, վաճառքի բաժնի աշխատակիցների մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ ներառյալ վերապատրաստումները:

Վաճառքի մենեջերին ներկայացվող հիմնական պահանջներն են՝ առնվազն երկու տարվա աշխատանքային փորձը համապատասխան ոլորտում, բարձրագույն կրթությունը համապատասխան ոլորտում, 1C ծրագրի իմացությունը, հայերենի, ռուսերենի և անգլերենի լավ իմացությունը: Վաճառքի մենեջերի աշխատանքային հիմնական պարտականություններն են՝ պոտենցիալ հաճախորդների որոնումը, հաճախորդների հետ առևտրային բանակցությունների անցկացումը, վաճառքի ամսական պլանի, վաճառքի վերաբերյալ հաշվետվությունների նախապատրաստումը, հաճախորդների տվյալների բազաների վարումը, այլ կառավարիչների հետ համագործակցումը, աշխատակիցների շրջանում ընկերության ընթացիկ ապրանքային տեսականու իմացության ապահովումը, մրցակիցների ակտիվության և շուկայի զարգացման միտումների մոնիթորինգի իրականացումը:

Խոշոր կազմակերպության գլխավոր հաշվապահին ներկայացվող հիմնական պահանջներն են. բարձրագույն կրթությունը տնտեսագիտության, ֆինանսների կամ հաշվապահության ոլորտներում, առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձը, աուդիտի և ներքին վերահսկողության սկզբունքների և պրակտիկայի իմացությունը, հարկային օրենսդրության և հաշվապահական ստանդարտների լավ իմացությունը, ACCA որակավորումը, հայերենի և ռուսերենի գերազանց իմացությունը, անգլերենի իմացությունը ցանկալի է, MS Office ծրագրային փաթեթի իմացությունը, հաշվետվությունների կազմման և բիզնես-նամակագրության հմտությունները, AS Accountant և 1C ծրագրերով աշխատելու հմտությունը, ճնշման տակ աշխատելու և մանրուքները նկատելու ունակությունը, պատասխանատվության զգացումը և ճշտապահությունը: Գլխավոր հաշվապահի հիմնական աշխատանքային պարտականություններն են՝ հարկային և կառավարչական հաշվետվությունների նախապատրաստումը, հաշվառման քաղաքականության և գործընթացների ներդրումը, պահպանումը և վերահսկումը, եկամուտների և դրամական հոսքերի կառավարումը,

ըստ պահանջի՝ այլ ֆինանսական հաշվետվությունների և վերլուծությունների ներկայացումը:


Աշխատանքի առաջարկման առանձին հատված է նաև բանկայինը, որտեղ հաճախ կադրերի համալումն իրականացվում է բուհերին դիմելու ճանապարհով (առավել հաճախ՝ բուհից արտադրական կամ գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպման նպատակով գործուղված և աչքի ընկած ուսանողներին աշխատանք առաջարկելու ճանապարհով): Բանկային համակարգում գերակշռողը հաշվապահների, սպասարկման, վարկային մասնագետների պահանջարկն է: Հատկանշական է, որ հիմնականում հենց բանկային համակարգում է հնարավոր առանց համապատասխան աշխատանքային փորձի ընդունվել աշխատանքի:

«Հ-ում գործատուների կողմից աշխատանքի առաջարկի վերլուծությունը ցույց տվեց, որ թեև տնտեսագիտական որոշ մասնագիտություններ համեմատաբար պահանջված են աշխատաշուկայում, սակայն բուհերի շրջանավարտներն աշխատանքի անցնելու առումով ունեն մեկնարկային սահմանափակ հնարավորություններ, ինչը կապված է բոլոր մասնագիտությունների և հաստիքների գծով համապատասխան աշխատանքային փորձի առկայության պահանջի հետ:

Կազմակերպությունների հայտարարություններում մասնագետներին ներկայացվող պահանջներին անդրադարձ է կատարվել այն նկատառումով, որ համապատասխան թողարկող ամբիոնները ուսումնական գործընթացի և պրակտիկաների կազմակերպման ժամանակ ուշադրության կենտրոնում պահեն հենց այդ մոտեցումները՝ հեշտացնելով տնտեսագետ շրջանավարտների գործն աշխատանքի ընդունվելիս:

2. ՀՊՏՀ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՆԵՐՈՒԺԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ԵՎ ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ

Հետազոտության հաշվետվության առաջին բաժնում կատարված վերլուծությունից պարզ դարձավ, որ 2003-2013 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ բուհերի երկաստիճան համակարգով կրթական ծրագրերին դիմել են տարեկան միջինը 5100 ուսանող (բացառությամբ 2011/12 ուսումնական տարում՝ կապված դպրոցներում շրջանավարտներ չլինելու հետ): Պետք է նշել, որ կրթական ծրագրերի դիմորդների զգալի մասը բակալավրական կրթության դիմորդներն են, իսկ մագիստրոսական կրթական ծրագրերի դիմորդների թիվը, սովորաբար կրկնակի պակաս է եղել:



Գծապատկեր 3. Բակալավրի և մագիստրոսի կրթական տեղերի մասնաբաժինները 2007-2013 ուսումնական տարիներին՝ ընդհանուր կրթական մասնագիտություններով ընդունելության ծավալում

Գծանկար 3-ից երևում է, որ 2007-2013 թթ. ուսումնական տարիների ընթացքում մոտ 63%-ը բակալավրական և 37%-ը մագիստրոսական ծրագրերի դիմորդներն են: Ընդ որում, նշված ցուցանիշը ստացվել է վերջին երեք տարիների ընթացքում մագիստրոսական կրթության դիմորդների թվի ավելացման հաշվին: Նախորդող երկու տարիներին հարաբերակցությունը կազմել է մոտ 70/30:


Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված տնտեսագիտական մասնագիտություններով բարձրագույն կրթության երկաստիճան համակարգով ուսանողների ընդունելություն կազմակերպող բուհերը: Տվյալ դեպքում «մասնագիտություն-կրթական ծրագիր մատուցող բուհ» վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ բուհական համակարգում, ըստ մատուցվող մասնագիտության հաճախականության, մասնագիտությունների վարկանիշն ունի հետևյալ հաջորդականությունը.

1. «**Ֆինանսներ**»՝ բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 3 պետական և 14 մասնավոր բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 6 պետական բուհեր,
2. «**Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)**» (ըստ մասնագիտացումների)՝ բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 5 պետական և 6 մասնավոր բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 6 պետական բուհեր,
3. «**Կառավարում**» (ըստ մասնագիտացումների)՝ բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 6 պետական և 4 մասնավոր բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 5 պետական բուհեր,
4. «**Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում**» (ըստ ճյուղերի)՝ բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 6 պետական և 3 մասնավոր բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 5 պետական բուհեր,
5. «**Կառավարման տեղեկատվական համակարգեր**» բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 3 պետական և 5 մասնավոր բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 4 պետական բուհեր,
6. «**Մարքեթինգ**» բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 5 պետական բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 5 պետական բուհեր գումարած ԱՄՆ ՄԶԳ Գյուղատնտեսության զարգացման կենտրոնի և ՀՊԱՀ համատեղ կրթական ծրագիրը, որի համար ԿԳՆ-ն ՀՊԱՀ-ին հատկացնում է առանձին կրթական տեղեր,
7. «**Միջազգային տնտեսական հարաբերություններ**» բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 2 պետական և

- 3 մասնավոր բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 3 պետական բուհեր,
8. «**Քննօգտագործման տնտեսագիտություն**» բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր մատուցում են 5-ական պետական բուհեր,
 9. «**Տնտեսագիտության տեսություն**» բակալավրական կրթական ծրագրեր մատուցում են 3 պետական բուհեր, մագիստրոսական ծրագրեր՝ 4 պետական բուհեր,
 10. «**Կոմերցիա**», «**Հողագույքային հարաբերություններ**», «**Ապահովագրական գործ**», «**Ապրանքագիտություն**» բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր մատուցում են 2-ական պետական բուհեր,
 11. «**Վիճակագրություն**», «**Մակրոտնտեսական կարգավորում և կանխատեսում**», «**Աշխատանքի տնտեսագիտություն**», «**Մաթեմատիկական մոդելները և մեթոդները տնտեսագիտության մեջ**» բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր մատուցում է միայն ՀՊՏՀ-ն:

Ինչպես երևում է վերլուծությունից, մասնավոր բուհերը հիմնականում թիրախավորել են առավել մեծ վարկանիշ ունեցող մասնագիտությունները: Պետական բուհերից ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված մասնագիտությունների «ծածկման հարցում» առաջատարը Հայաստանի պետական տնտեսագիտական (բոլոր հաստատված մասնագիտությունները և մասնագիտացումները՝ երկաստիճան համակարգով) և Հայաստանի ազգային ագրարային համալսարաններն են (կառավարում, մարքեթինգ, ապահովագրական գործ, ֆինանսներ, հաշվապահական հաշվառում, հողագույքային հարաբերություններ, ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն): Մյուս պետական կամ միջպետական բուհերը ևս թիրախավորել են համեմատաբար մեծ հեղինակություն վայելող մասնագիտությունները:

Պետք է նշել, որ ինչպես բարձրագույն կրթության դիմորդների, այնպես էլ թողարկվող մասնագիտությունների բազմազանության առումով պետական բուհերը մասնավորների համեմատ ունեն էական (դիմորդների մասնաբաժնում՝ մոտ 9 անգամ, մասնագիտությունների ցանկում՝ մոտ 5 անգամ) առավելություններ:



Գծապատկեր 4. ՀՀ բուհերի մասնաբաժինները 2012-13 ուսումնական տարվա տնտեսագիտական մասնագիտություններով բակալավրի (ծախից), մագիստրոսի (վեներոնում) կրթական ծրագրերով և երկաստիճան բուհական համակարգերի ընդունելության ծավալում

Գծապատկեր 4-ից երևում է, որ մասնավոր բուհերին բաժին է ընկնում բակալավր դիմորդների մոտ 9%-ը, մագիստրատուրայի դիմորդների՝ 7%-ը և բոլոր առաջին կուրս դիմորդների՝ ընդամենը 8%-ը: Ակնհայտ է, որ տնտեսագիտական մասնագիտությունների բազմազանության գծով երկու առաջատարների մասնաբաժինները մյուս պետական բուհերից անհամեմատ բարձր են: Մասնավորապես՝ ՀՊՏՀ-ին բաժին է ընկել բակալավրիատի բոլոր դիմորդների մոտ 39%-ը, մագիստրատուրա դիմաձևների մոտ 42%-ը և բոլոր առաջին կուրս դիմաձև ուսանողների՝ 40%-ը: ՀԱԱՀ-ին բաժին է ընկել բակալավրիատ դիմաձևների 23%-ը, մագիստրատուրա դիմաձևների 5%-ը և բոլոր առաջին կուրս դիմաձևների 16%-ը: Մյուս բուհերում նշված երեք ցուցանիշները համապատասխանաբար կազմել են. Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա՝ 9%, 5% և 8%, ԵՊՀ՝ 6%, 7% և 7%, ՀՊՃՀ՝ 6%, 8% և 6%, ԵՃՇՊՀ՝ 5%, 10% և 7%: Մագիստրոսական կրթության բնագավառում զգալի մասնաբաժիններ ունեն նաև Հայաստանում Ամերիկյան համալսարանը՝ 8% և ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնը՝ 5%: Հայաստանում Ֆրանսիական համալսարանին և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանին բոլոր ցուցանիշների գծով համապատասխանաբար բաժին է ընկել դիմորդների 3%-ը:

Ելնելով վերլուծության արդյունքներից բարձրագույն տնտեսագիտական կրթության

Նախնական փուլում խմբի կողմից իբրև տնտեսագետ կադրերի պատրաստման բնագավառում ՀՊՏՀ մրցակիցներ դիտարկվել են պետական բուհերը (ելնելով դրանց ավելի բարձր հեղինակություն ունենալու հանգամանքից): Ըստ այդմ, առանձին մասնագիտությունների գծով ՀՊՏՀ մրցակիցներն են.

- **Տնտեսագիտություն՝** ԵՊՀ, Հայաստանում Ամերիկյան համալսարան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան,
- **Կառավարում՝** ԵՊՀ, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա (ԵԿՏԱ), Հայաստանում Ֆրանսիական համալսարան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Հայաստանում Ամերիկյան համալսարան,


- **Հաշվապահական հաշվառում՝** Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Հայաստանում Ֆրանսիական համալսարան, ԵՃՇՊՀ, ՀԱԱՀ,
- **Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում՝** ՀՊՃՀ, Հայաստանում Ամերիկյան համալսարան, ԵՃՇՊՀ,
- **Ֆինանսներ՝** Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Հայաստանում Ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն, ՀԱԱՀ,
- **Մարքեթինգ՝** ՀԱԱՀ, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Հայաստանում Ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն,
- **Միջազգային տնտեսական հարաբերություններ՝** ԵԿՏԱ, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան,
- **Բնօգտագործում՝** ՀՊՃՀ, ԵՃՇՊՀ,
- **Կառավարման տեղեկատվական համակարգեր՝** ՀՊՃՀ, ԵԿՏԱ, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն:

Հատկանշական է, որ այս դասակարգման մեջ ՀՊՏՀ մրցակիցները հեղինակություն-գին կտրվածքով ունեն տարբեր ազդեցություն: Մասնավորապես՝ հեղինակության առումով ՀՊՏՀ առաջնային մրցակիցներն են ԵՊՀ-ն, ԵԿՏԱ-ն, Հայաստանում Ամերիկյան համալսարանը, Հայաստանում Ֆրանսիական համալսարանը և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը: Ծառայության գնային մրցունակության առումով ՀՊՏՀ առաջնային մրցակիցներն են ՀԱԱՀ-ը, ՀՊՃՀ-ն, ԵՃՇՊՀ-ն և ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնը:

Հարկ է ընդգծել, որ առանձին մասնագիտությունների վարկանշավորում ամբողջ բուհական համակարգի համար սույն հաշվետվության մեջ կատարված չէ՝ պայմանավորված ՀՀ պետական և մասնավոր բուհերի կողմից տեղեկատվության տրամադրման գործընթացի ձգձգմամբ¹³: Այդ պատճառով հաշվետվության տվյալ

¹³ Վերջին հինգ տարում ՀՀ պետական և ոչ պետական բուհեր ընդունված և ավարտած առանձին մասնագիտություններով և մասնագիտացումներով ուսանողների թվի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, ծրագրի ղեկավարի գեկուցագրի հիման վրա, ՀՊՏՀ ռեկտոր Կ.Աթոյանը գրությամբ դիմել է ՀՀ ԿԳ

հատվածում դիտարկված են միայն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի համապատասխան ցուցանիշները: Ինչպես արդեն նշվել է, ՀՊՏՀ-ն վերջին 10 տարիների ընթացքում ամենաշատ դիմորդներ ապահովված տնտեսագիտական բուհն է:



Գծապատկեր 5. ՀՊՏՀ մագիստրոսական (ծախից) և բակալավրական (աջից) կրթության դիմած ուսանողների շարժընթացը 2007-2013 թթ. ընկած ժամանակահատվածում (ըստ հաշվարկային տարվա հունվարի 1-ի դրությամբ կրթությունը շարունակածների)

Գծապատկեր 5-ից երևում է, որ բակալավրական կրթության դիմած և ընդունված ուսանողների թիվը (առկա և հեռակա ծրագրերով) վերջին հինգ տարիներին տատանվել է 1500-1800-ի սահմաններում (բացառությամբ 2011/12 ուսումնական տարվա՝ արդեն հայտնի պատճառով): Մագիստրատուրա դիմած և ընդունված ուսանողների թիվը մեծ տատանումներ է արձանագրել, ինչն օրինաչափ է և պայմանավորված ՀՊՏՀ-ում մագիստրոսական կրթության, դրա տարբեր ձևերի ոչ միաժամանակյա ներդրմամբ (բոլոր մասնագիտությունների գծով), մասնագիտական կրթական նոր ծրագրերի ներդրմամբ, իսկ 2011/12 ուսումնական տարում՝ նաև բակալավրիատում դիմորդների բացակայությունը փոխհատուցելու նպատակով, արտամրցութային հիմունքներով բոլոր դիմորդներին

Նախարար Ա. Աշոտյանին՝ աջակցության համար: Նախարարի շրջաբերական նամակին, մինչ հաշվետվություն կազմելը, արձագանքել են շատ քիչ թվով բուհեր: Այդ պատճառով մասնագիտությունների պահանջվածության սանդղակավորումն իրականացվել է միայն ՀՊՏՀ տվյալներով:


հրամանագրելով: 2012 և 2013 թվականներին, կարելի է ասել, երևում է ՀՊՏՀ-ում մագիստրոսական կրթության ծրագրերի դիմորդների իրական արդյունքը՝ մոտ 1000 մագիստրոս:

Հատկանշական է, որ ՀՊՏՀ-ում իրականացվում են 17 մասնագիտությունների և ևս 10 մասնագիտացումների բակալավրական կրթական ծրագրեր, ինչպես նաև 47 մասնագիտությունների ու մասնագիտացումների մագիստրոսական կրթական ծրագրեր: Պետք է նշել, սակայն, որ դրանցից յուրաքանչյուրը դիմորդների շրջանում ունի տարբեր հնչեղություն:

Գծապատկեր 6-ում ներկայացված են 2013/14 ուսումնական տարում ՀՊՏՀ բակալավրական կրթության տարբեր մասնագիտությունների և մասնագիտացումների անվճար ուսուցման (առաջին հայտով) դիմորդների թիվը՝ բացարձակ արժեքով: Այս առումով, ՀՊՏՀ մասնագիտությունները հնարավոր է բաժանել չորս խոշոր խմբերի.

1. Միջին վիճակագրական պահանջվածությունից կրկնակի ցածր պահանջվածություն ունեցող մասնագիտություններ և մասնագիտացումներ (ներառված են 24-40 դիմորդ ապահովված մասնագիտությունները և մասնագիտացումները)՝ զբոսաշրջության կառավարում, հակաճգնաժամային կառավարում, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, մաքսային գործ, կոմերցիա, տնտեսագիտական վերլուծություն, պարենային (նաև ոչ պարենային) ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն:

2. Միջին վիճակագրական պահանջվածությունից ավելի ցածր պահանջվածություն ունեցող մասնագիտություններ և մասնագիտացումներ (ներառված են 50-70 դիմորդ ապահովված մասնագիտությունները և մասնագիտացումները)՝ պետական և մունիցիպալ կառավարում, բիզնեսի կազմակերպում, վիճակագրություն, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, բնօգտագործման տնտեսագիտություն, կառավարման տեղեկատվական համակարգեր, մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ:



Գծապատկեր 6. 2013/14 ուսումնական տարում ՀՊՏՀ բակալավրի կրթական ծրագրերի դիմորդների ըստ մասնագիտությունների

3. Միջին վիճակագրական պահանջվածություն ունեցող մասնագիտություններ և մասնագիտացումներ (ներառված են 71-80 դիմորդ ապահովված մասնագիտությունները և մասնագիտացումները)՝ միջազգային տնտեսական հարաբերություններ, մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, աշխատանքի տնտեսագիտություն, հողագույքային հարաբերություններ, աուդիտ, ֆինանսներ:

4. Միջին վիճակագրական պահանջվածությունից ավելի բարձր պահանջվածություն ունեցող մասնագիտություններ և մասնագիտացումներ (ներառված են 90 և ավելի շատ դիմորդ ապահովված մասնագիտությունները և մասնագիտացումները)՝ տնտեսագիտության տեսություն, կառավարում, բանկային գործ, ապահովագրական գործ, հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի), մարքեթինգ:

Պետք է նշել, որ նման բաժանումը կատարվել է միայն ըստ անվճար տեղերի դիմորդների նախապատվությունների, որ վճարովի և վճարովի հեռակա ուսուցման դիմում հայտերում (նախապատվությունների տեսանկյունից բավականաչափ մոտ են) նշված բաժանումից ունի որոշ շեղումներ: Այսպիսով՝ վճարովի դիմում հայտերի վերլուծությունից և առկա տեղերի հետ համադրումից ելնելով, ՀՊՏՀ բակալավրական ուսուցման մասնագիտություններն ու մասնագիտացումները, ըստ դիմորդների նախապատվությունների կամ պահանջվածության աստիճանի, վերջնականապես հնարավոր է դասակարգել հետևյալ կերպ.

1. Միջին վիճակագրականից ավելի ցածր պահանջվածություն ունեցող մասնագիտություններ և մասնագիտացումներ՝ վիճակագրություն, բնօգտագործման տնտեսագիտություն, մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ, հակաճգնաժամային կառավարում, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, կոմերցիա, տնտեսագիտական վերլուծություն, պարենային (նաև ոչ պարենային) ապրանքների ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն, աշխատանքի տնտեսագիտություն:

2. Միջին վիճակագրական պահանջվածություն ունեցող մասնագիտություններ և մասնագիտացումներ՝ կառավարման տեղեկատվական համակարգեր, մաքսային գործ, զբոսաշրջության կա-

**Կրթական ծառայության պահանջարկի վերարտադրությունը
ՀՊՏՀ-ում, մագիստրոսական ծրագրում ուսանողների բաշխվածքը
ՀՊՏՀ և այլ բուհերի ուսանողների միջև**

ռավարում, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, պետական և մունիցիպալ կառավարում, բիզնեսի կազմակերպում, մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, հողագույքային հարաբերություններ, տնտեսագիտության տեսություն:

3. Միջին վիճակագրականից ավելի բարձր պահանջվածություն ունեցող մասնագիտություններ և մասնագիտացումներ՝ կառավարում, ֆինանսներ, բանկային գործ, միջազգային տնտեսական հարաբերություններ, հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի), աուդիտ, մարքեթինգ, ապահովագրական գործ:

ՀՊՏՀ կրթական ծառայության մյուս կարևոր բաղադրիչը մագիստրոսական կրթությունն է, որտեղ տարբեր մասնագիտությունների և մասնագիտացումների դիմորդների թիվը կախված է երեք կարևորագույն փոփոխականներից՝ բազային բակալավրական մասնագիտության և մասնագիտացման վերարտադրությունը մագիստրոսական կրթության նույն մասնագիտության կամ առաջարկվող մասնագիտացման մեջ, ՀՊՏՀ բակալավրիատ ընդունված և այն ավարտած ուսանողների տարբերությունը և այլ բուհերից ՀՊՏՀ մագիստրոսական ծրագրեր դիմողների նախապատվությունները:

Աղյուսակ 15-ում ներկայացված են 2011/12, 2012/13 և 2013/14 ուսումնական տարիների ընթացքում ՀՊՏՀ մագիստրոսական ծրագրեր դիմած և տարբեր մասնագիտություններով ու մասնագիտացումներով ընդունված ուսանողների մեջ ՀՊՏՀ բազային ու այլ մասնագիտությունների շրջանավարտների և ՀՀ այլ բուհերի ուսանողների մասնաբաժինները, ինչպես նաև բազային մասնագիտությունների ու ՀՊՏՀ միջին վերարտադրության ցուցանիշները երեք տարվա կտրվածքով:

Մասնագիտությունը	Պահանջարկի վերարտադրության անվարակը 2010-2014 թթ.	Մագիստրոսարտադրյալի վճարովի ուսանողների թվում տրվալ մասնագիտության ուսանողների մասնաբաժինը 2010-2014 թթ.	Մագիստրոսարտադրյալի վճարովի ուսանողների թվում ՀՊՏՀ այլ մասնագիտ. և այլ բուհերի ուսանողների մասնաբաժինը 2010-2013 թթ.
Կառավարում	27.8%	20.1%	69.8%
Պետական և մունիցիպալ կառավարում	19.0%	28.2%	56.3%
Հակաճգնաժամային կառավարում	10.0%	43.3%	33.3%
Զբոսաշրջության մենեջմենթ	11.6%	37%	11.1%
Ձեռնարկությունների տնտ. և կառավար.	21.8%	52.4%	28.6%
Աշխատանքի տնտեսագիտություն	6.3%	24.1%	34.5%
Ֆինանսներ	31.3%	37.4%	45.7%
Արժեթղթ. շուկայի վերլուծ. և կառավարում	32.5%	45.5%	33.3%
Մաքսային գործ	39.9%	39.5%	40.7%
Բանկային գործ	---	9.3%	85.6%
Ապահովագրական գործ	27.4%	40.8%	32.4%
Հաշվապահական հաշվառում	14.7%/27.0%	28.8%	57.7%
Աուդիտ	14.7%/27.0%	40.0%	50.0%
Հողագույքային հարաբերություններ	25.6%	56.4%	17.9%
Բնօգտագործման տնտեսագիտություն	11.0%	30.2%	25.6%
Մակրոտնտ. քաղաքակ. կանխատեսում	27.7%	58.4%	12.4%
Միջազգային տնտես. հարաբերութ.	37.5%	58.0%	26.1%
Տեսական տնտեսագիտություն	16.1%	53.3%	10.0%
Մարքեթինգ	36.0%	28.0%	61.7%
Բիզնեսի կազմակերպում	32.7%	60.8%	25.7%
Կոմերցիա	31.5%	46.6%	34.5%
Ապրանքագիտություն (պարեն. և ոչ պարեն.)	17.9%	54.4%	29.4%
Կառավարման տեղեկատվ. համակ.	30.5%	33.9%	40.7%
Մաթ. մեթոդ. և մոդել. տնտեսագ. մեջ	25.4%	75.42	2.3%
Վիճակագրություն	16.4%	56.7%	6.7%

Հարկաբյուջետային իրավունք	-	90.0%	10.0%
Հարկային վարչարարություն	-	50.0%	50.0%
Մաքսային վարչարարություն	-	57.5%	35.0%
Պետական եկամ. վերլուծ. և կանխատես.	-	54.3%	45.7%
Կոլեկտ. ներդրում. համակարգեր	-	63.3%	36.7%
Բանկային գործ. կազմակերպում	-	52.5%	47.5%
Ընդ. պիլոտային ծրագրերում վերարտադրություն	4.6%	-	-
Տնտ. գործուն. բնապահպան. փորձաքննութ	-	70.8%	39.2%
Անշարժ գույքի գնահատում	-	40.0%	40.0%
Պետական գույքի կառավարում	-	68.8%	34.4%
Պիլոտային ծրագրերում վերարտադրություն՝ Հողագ. հարաբեր. մասնագիտություն	28.2%	-	-

Կրթական ծառայության վերարտադրության միջին ցուցանիշը (նույն մասնագիտություններում կամ ՀՊՏՀ այլ մասնագիտութ.)

Մագիստրատուրայի վճարովի ուսանողների թվում ՀՊՏՀ շրջանավարտների մասնաբաժինը 2010-2014 թթթ.

Մագիստրատուրայի վճարովի ուսանողների թվում այլ բուհերի ուսանողների մասնաբաժինը 2010-2014 թթթ.

ՀՊՏՀ միջին ցուցանիշը	30.3%	47.0%	53.0%
-----------------------------	--------------	--------------	--------------

Աղյուսակի վերլուծությունից երևում է, որ ՀՊՏՀ մագիստրոսական մասնագիտություններից.

- **հիմնականում համալրվում են բազային բակալավրական մասնագիտությունների շրջանավարտներով՝** մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ, հարկաբյուջետային իրավունք, տնտեսական գործունեության բնապահպանական փորձաքննություն, պետական գույքի կառավարում (ներքին համալրման ցուցանիշը բարձր է 70%-ից), ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, հողագույքային հարաբերություններ, մակրոտնտեսական կանխատեսում և կարգավորում, միջազգային տնտեսական հարաբերություններ, տնտեսագիտության տեսություն, ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն, վիճակագրություն, հարկային վարչարարություն, մաքսային վարչարարություն, պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում, կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառա-

վարում, բանկային գործունեության կազմակերպում (ներքին համալրման ցուցանիշը տատանվում է 50-65%-ի միջակայքում) մասնագիտությունները,

- **գրեթե կիսով չափ համալրվում են բազային բակալավրական մասնագիտությունների շրջանավարտներով՝** հակաճգնաժամային կառավարում, զբոսաշրջության մենեջմենթ, ֆինանսներ, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կանխատեսում, մաքսային գործ, ապահովագրական գործ, աուդիտ, կոմերցիա և անշարժ գույքի կառավարում մասնագիտությունները (ներքին համալրման ցուցանիշը տատանվում է 37-45%-ի միջակայքում),

- **մասամբ են համալրվում բազային բակալավրական մասնագիտությունների շրջանավարտներով՝** մունիցիպալ կառավարում, կառավարում, աշխատանքի տնտեսագիտություն, հաշվապահական հաշվառում, բնօգտագործման տնտեսագիտություն, մարքեթինգ և կառավարման տեղեկատվական համակարգեր մասնագիտությունները (ներքին համալրման ցուցանիշը տատանվում է 20-35%-ի միջակայքում)¹⁴,

- **գրեթե չեն համալրվում բազային բակալավրական մասնագիտությունների շրջանավարտներով՝** բանկային գործ (ներքին համալրման ցուցանիշը ցածր է 10%-ից):

- **հիմնականում համալրվում են ՀՊՏՀ այլ բակալավրական մասնագիտությունների կամ այլ բուհերի շրջանավարտներով՝** կառավարում, մունիցիպալ կառավարում, բանկային գործ, հաշվապահական հաշվառում, աուդիտ, հարկային վարչարարություն և մարքեթինգ մասնագիտությունները (արտաքին համալրման ցուցանիշը բարձր է 50%-ից),

- **ՀՊՏՀ այլ բակալավրական մասնագիտությունների կամ այլ բուհերի շրջանավարտներով համալրման բարձր ցուցանիշ ունեն՝** ֆինանսներ, մաքսային գործ, կառավարման տեղեկատվական համակարգեր, մաքսային վարչարարություն, պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում, կոլեկտիվ ներդրումային համակարգեր, բանկային գործունեության կազմակերպում, տնտեսական գործունեության բնապահպանական փորձաքննու-

¹⁴ Իրականում այս ցանկում «Հաշվապահական հաշվառում» և «Մարքեթինգ» մասնագիտությունները դուրս են ընդհանուր օրինաչափությունից: Չնայած դրանք ունեն վերարտադրության անհամեմատ բարձր ցուցանիշ, սակայն դրանց հատկացված կրթական տեղերն ավելի շատ են, քան շրջանավարտների թիվն է:

թյուն, անշարժ գույքի գնահատում մասնագիտությունները (արտաքին համալրման ցուցանիշը տատանվում է 35-45%-ի միջակայքում),


- **ՀՊՏՀ այլ բակալավրական մասնագիտությունների կամ այլ բուհերի շրջանավարտներով համալրման ցածր ցուցանիշ ունեն**՝ հակաճգնաժամային կառավարում, աշխատանքի տնտեսագիտություն, աշխատանքային արժեթղթերի շուկայի վերլուծություն և կանխատեսում, ապահովագրական գործ, կոմերցիա, պետ. գույքի կառավարում մասնագիտությունները (արտաքին համալրման ցուցանիշը տատանվում է 30-35%-ի միջակայքում),

- **մասամբ են համալրվում ՀՊՏՀ այլ բակալավրական մասնագիտությունների կամ այլ բուհերի շրջանավարտներով**՝ ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, բնօգտագործման տնտեսագիտություն, միջազգային տնտեսական հարաբերություններ, բիզնեսի կազմակերպում, ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն մասնագիտությունները (արտաքին համալրման ցուցանիշը տատանվում է 20-30%-ի միջակայքում),

- **գրեթե չեն համալրվում ՀՊՏՀ այլ բակալավրական մասնագիտությունների կամ այլ բուհերի շրջանավարտներով**՝ գրոսաշրջության մենեջմենթ, հողագույքային հարաբերություններ, մակրոտնտեսական կարգավորում և կանխատեսում, տնտեսագիտության տեսություն և հարկաբյուջետային իրավունք մասնագիտությունները (արտաքին համալրման ցուցանիշը տատանվում է 10-20%-ի միջակայքում),

- **չեն համալրվում ՀՊՏՀ այլ բակալավրական մասնագիտությունների կամ այլ բուհերի շրջանավարտներով**՝ վիճակագրություն, մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ մասնագիտությունները (արտաքին համալրման ցուցանիշը փոքր է 10%-ից):

Ինչպես երևում է աղյուսակ 15-ից, ՀՊՏՀ-ում ներքին վերարտադրության (բակալավրիատի շրջանավարտների կողմից բազային կամ ՀՊՏՀ այլ մագիստրոսական մասնագիտության դիմողները) ցուցանիշը կազմում է մոտ 30%: Սակայն այստեղ ևս առկա են միջին ցուցանիշից էապես ցածր, ցածր, միջին ցուցանիշին մոտ (սակայն կրկին ցածր) և միջին ցուցանիշից բարձր վերարտադրություն ապահոված մասնագիտություններ (գծ. 7):



Գծապատկեր 7. ՀՊՏՀ կրթական ծառայության միջին վերարտադրության ցուցանիշից շեղումներն ըստ մագիստրոսական կրթության առանձին մասնագիտությունների

ինչպես երևում է գծապատկեր 7-ից, ՀՊՏՀ-ում.

- **միջին վերարտադրության ցուցանիշից էապես ցածր արդյունք ունեն**՝ հակաճգնաժամային կառավարում, զբոսաշրջության մենեջմենթ, աշխատանքի տնտեսագիտություն և բնօգտագործման տնտեսագիտություն մասնագիտությունները,

- **միջին վերարտադրության ցուցանիշից ցածր արդյունք ունեն**՝ մունիցիպալ կառավարում, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, տնտեսագիտության տեսություն, ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն, մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ և վիճակագրություն մասնագիտությունները,

- **միջին վերարտադրության ցուցանիշին մոտ, սակայն դրանից ցածր արդյունք ունեն**՝ ապահովագրական գործ, կառավարում, հաշվապահական հաշվառում, հողագույքային հարաբերություններ, մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում մասնագիտությունները,

- **միջին վերարտադրության ցուցանիշից բարձր արդյունք ունեն**՝ ֆինանսներ, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, մաքսային գործ, միջազգային տնտեսական հարաբերություններ, մարքեթինգ, բիզնեսի կազմակերպում, կոմերցիա և կառավարման տեղեկատվական համակարգեր մասնագիտությունները:

Պետք է նշել, որ բակալավրիատ-մագիստրատուրա շղթայում առանձին մասնագիտությունների պահանջարկի ցածր վերարտադրությունը պայմանավորված է տարբեր պատճառներով.

➤ ցածր պահանջարկ ունեցող որոշ մասնագիտացումներն ավելի մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունների խմբերում (բլոկներում) ներառումը (օրինակ՝ հակաճգնաժամային կամ զբոսաշրջության կառավարումը՝ կառավարման, տնտեսագիտական վերլուծությունը՝ հաշվապահության կամ մաքսային գործը և արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարումը՝ ֆինանսների),

➤ բարձրագույն տնտեսագիտական կրթության շուկայում ՀՊՏՀ համեմատաբար բարձր վարկանիշը, ինչը դիմորդներին դրդում է մատնանշել նաև մասնագիտություններ, որոնք իրենց նախասիրություններին չեն համապատասխանում, ունեն համեմատաբար ցածր վարկանիշ, սակայն ՀՊՏՀ բակալավրական կրթական ծրագիր ընդունվելու միակ («վերջին հույսի») ճանապարհն են,


իսկ մագիստրատուրայում հետագայում տեղի է ունենում մասնագիտության փոփոխություն այլ մասնագիտությունների օգտին:

Նման պնդման հիմք են տալիս հետազոտության համատեքստում ՀՊՏՀ բակալավրական բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների 3-րդ կուրսի ուսանողների շրջանակում իրականացված հարցումների արդյունքները (գծ.8):

Գծապատկերից երևում է, որ բացառությամբ հաշվապահական հաշվառման և կառավարման ֆակուլտետների ուսանողների, ՀՊՏՀ մյուս ֆակուլտետներում, ըստ «նախասիրություն + մասնագիտության պահանջարկ» փաստարկի, ցուցանիշը տատանվում է 45-60%-ի միջակայքում, իսկ մասնագիտության պահանջվածության փաստարկն ավելի փոքր է, և բացառությամբ ֆինանսներ և հաշվապահության մասնագիտությունների (30%), մյուս մասնագիտություններում ընտրության գործոնների շարքում ըստ կշռի դա տատանվել է 3-16%-ի միջակայքում: Հատկանշական է նաև կրթական ծրագրում պատահականորեն (երբ, ասենք, այն նշված է եղել 8 վճարովի մասնագիտությունների ցուցակի ամենավերջում) հայտնվելու փաստարկի մեծ տեսակարար կշիռը:

Պետք է նշել, որ ըստ սեփական նախասիրությունների (առանց հաշվի առնելու ընտրած մասնագիտության իրական պահանջարկը) և որևէ եղանակով, անգամ ոչ նախապատվելի մասնագիտության կրթական ծրագրին մասնակցելու ճանապարհով, ՀՊՏՀ-ում սովորելու նախնական ցանկությունը հետագայում մեծացնում են ուսանողների դժգոհությունն ինչպես սեփական մասնագիտությունից, այնպես էլ ՀՊՏՀ կրթական գործընթացից (ինչն օբյեկտիվ չէ և կապված է սխալ ընտրության փաստարկի հետ):


Մասնավորապես՝ եթե երրորդ կուրսում ՀՊՏՀ ուսանողների մոտ 92%-ը հստակ կողմնորոշված է եղել կրթությունն անպայմանորեն մագիստրատուրական ծրագրում շարունակելու հարցում, սակայն նրանց միայն 60%-ն է, որ հաստատապես որոշել է իր կրթությունը շարունակել ՀՊՏՀ-ում: Սակայն պետք է ասել, որ բացառությամբ մարքեթինգի, հաշվապահական հաշվառման և ֆինանսների մասնագիտությունների, որոնցով ուսումը շարունակելու հաստատականությունը համապատասխանաբար կազմել է՝ 60%, 73% և 86%, մյուս մասնագիտությունների ուսանողների 35%-50%-ն է հաստատապես որոշած եղել, որ ուսումն անպայմանորեն շարունակելու է ՀՊՏՀ մագիստրատուրայում:



Փծապատկեր 8. ՀՊՏՀ բակալավրական կրթական ծրագրի ընդհանուր զբաղակցի կազմակերպչների բաշխվածքն ըստ ֆակուլտետների

Հատկանշական է, որ արդեն բազային բակալավրական մասնագիտությամբ ուսումը շարունակելու հարցում հստակ կողմնորոշված է եղել ուսանողների միայն 50%-ը, ընդ որում, ցուցանիշը նորից ապահովվել է մարքեթինգի, ֆինանսների, հաշվապահական հաշվառման, միջազգային տնտեսական հարաբերությունների և կառավարման տեղեկատվական համակարգերի մասնագիտությունների ուսանողների հաշվին, որտեղ ցուցանիշը տատանվել է 45-80%-ի, իսկ մյուս մասնագիտություններում՝ 20%-30%-ի միջակայքում: Անվճար համակարգում սովորողների պատասխանների բացառման դեպքում հարցման արդյունքներն ընդհուպ մոտ են 2010-2014 ուսումնական տարիների ընթացքում արձանագրված պահանջարկի վերարտադրության միջին ցուցանիշին:


Մագիստրոսական կրթության դիմորդների ներուժը գնահատելու համար, բացի պահանջարկի հավանական վերարտադրությունից, կարևոր է նաև բակալավրական կրթության առաջին կուրս ընդունվածների հոսունության գնահատումը: Այդ նպատակով ուսումնասիրվել են ՀՊՏՀ առկա և հեռակա սկզբունքներով կրթական ծրագրերում 2006-2011 թթ. առաջին կուրս ընդունված և ՀՊՏՀ-ն վերջնարդյունքում ավարտած ուսանողների թվի շեղումները (գծ. 9): Պետք է նշել, որ ՀՊՏՀ-ում շրջանավարտների թիվը սովորաբար 100-120-ով պակաս է առկա բակալավրիատ և 50-100-ով պակաս է հեռակա բակալավրիատ ընդունված ուսանողների թվից: Այսինքն՝ հնարավոր է ենթադրել, որ հաջորդող տարիներին մագիստրոսական կրթության ներուժային պահանջարկը 15-20%-ով ավելի փոքր կլինի ներկայումս սովորողների թվից:



Փծապատկեր 9. 2006-2011 ուսումնական տարիների ընթացքում առկա (ձախ կողմում) և հեռակա (աջ կողմում) բակալավրիատի կրթական ծրագրեր ընդունված և դրանք ավարտած ուսանողների թվի շեղումը

Այսպիսով՝ բակալավրական և մագիստրոսական մասնագիտությունները և մասնագիտացումները ինչպես ՀՊՏՀ (ներքին), այնպես էլ այլ բուհերից (արտաքին) դիմորդների շրջանում ունեն ոչ հավասարաչափ պահանջվածություն: **Միջինից բարձր պահանջվածություն ունեն հետևյալ մագիստրոսական մասնագիտությունները և մասնագիտացումները** (ըստ վարկանշային հաջորդականության). գործարար կառավարում, ֆինանսներ, մաքսային գործ (կամ մաքսային վարչարարություն), բանկային գործ (բանկային գործունեության կազմակերպում), աուդիտ, հաշվապահական հաշվառում, մարքեթինգային հաղորդակցություններ, ապահովագրական գործ, միջազգային տնտեսական հարաբերություններ, հանրային ֆինանսներ, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, պետական և մունիցիպալ կառավարում, մարքեթինգային հետազոտություններ, բիզնեսի կազմակերպում, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, էլեկտրոնային բիզնես: Իսկ ՀՊՏՀ մյուս մասնագիտությունների և մասնագիտացումների, ինչպես նաև գործատուների հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերի պահանջվածությունը անհամեմատ փոքր է վերը նշվածների պահանջվածության աստիճանից (գժ. 10):

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ աշխատաշուկայի սուբյեկտների հետ համատեղ գործարկված պիլոտային ծրագրերը չեն կարողացել կրկնել առաջին տարվա կտրվածքով արձանագրած ցուցանիշը: Այսպես՝ հարկային վարչարարություն կրթական ծրագրին նախկին 39-ի փոխարեն հաջորդ տարի դիմել է 13-ը, մաքսային վարչարարություն կրթական ծրագրին՝ 29-ի փոխարեն 11-ը, պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում մասնագիտությանը՝ 26-ի փոխարեն 9-ը, կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառավարում ծրագրին՝ 30-ի փոխարեն 4-ը, իսկ բանկային գործունեության կազմակերպում ծրագրին՝ 44-ի փոխարեն 18-ը, և սա այն դեպքում, երբ առկա մագիստրատուրայում «Բանկային գործ» կրթական ծրագրով այլևս ընդունելություն չի կազմակերպվել: Հողագույքային բլոկի պիլոտային ծրագրերն էլ դիմորդ ունեցել են միայն այն պատճառով, որ դրանց բազային բակալավրական մասնագիտությունների դիմորդները մասնագիտության շրջանակում, առանց շեմային քննության, այլ մասնագիտացումների դիմելու հնարավորություն չեն ունեցել:




Գծապատկեր 10. ՀՊՏՀ մագիստրոսական կրթության տարբեր մասնագիտությունների կրթական ծրագրերի դիմորդների շարժը 2011-2013 թթ. ժամանակահատվածում, բացարձակ արժեքներով

Պետք է նշել, որ ՀՀ աշխատաշուկայում աշխատանքի առաջարկի հաճախականության, դրանում առանձին տնտեսագիտական մասնագիտությունների մասնաբաժինների, ՀՊՏՀ բակալավրական և մագիստրոսական մասնագիտությունների ու մասնագիտացումների վարկանշավորման (ըստ դիմորդների նախապատվությունների) և ՀՊՏՀ տարբեր մասնագիտությունների՝ բակալավրիատ-մագիստրատուրա շղթայում պահանջարկի վերարտադրության ցուցանիշների վերլուծության և ստացված արդյունքների համադրման արդյունքում հնարավոր է առանձնացնել ՀՊՏՀ կրթական ծառայության մասնագիտական համակարգում (պորտֆելում) անհրաժեշտ մասնագիտությունները և մասնագիտացումները: Ըստ այդմ, բակալավրական համակարգում մեծ պահանջարկ, վերարտադրության բարձր ցուցանիշ և ըստ առաջարկվող մասնագիտացումների՝ մագիստրատուրայի արտաքին դիմորդների մեծ քանակ ապահովում են՝ բանկային գործ, ֆինանսներ, կառավարում, մարքեթինգ, հաշվապահական հաշվառում և միջազգային տնտեսական հարաբերություններ մասնագիտությունները: Բակալավրական համակարգում մեծ պահանջարկ, վերարտադրության համեմատաբար բարձր ցուցանիշ, սակայն արտաքին դիմորդների շրջանում ցածր պահանջարկ ունեն տնտեսագիտության տեսություն, ապահովագրական գործ և հողագույքային հարաբերություններ մասնագիտությունները: Իսկ համեմատաբար ցածր ցուցանիշներ ունեն, սակայն մասնագիտությունների դաշտի «ծածկման» նպատակով խիստ անհրաժեշտ են ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում, հողագույքային հարաբերություններ ու ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքնություն մասնագիտությունները:

Մագիստրոսական կրթության համակարգում մեծ պահանջվածություն ունեն՝ բանկային գործունեության կազմակերպում, ֆինանսներ, գործարար կառավարում, մարքեթինգ (մարքեթինգային հաղորդակցություններ, մարքեթինգային հետազոտություններ) միջազգային տնտեսական հարաբերություններ (արտաքին առևտրային քաղաքականություն, միջազգային արժույթաֆինանսական քաղաքականություն), աուդիտ, հաշվապահական հաշվառում մասնագիտությունները: Մագիստրոսական կրթության համակարգում


միայն ՀՊՏՀ ներքին սպառողների շրջանում մեծ պահանջարկ ունեն և կրթական պորտֆելում ակնհայտորեն վնասաբեր չեն՝ պետական և մունիցիպալ կառավարում, մաքսային վարչարարություն, հարկային վարչարարություն, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ձեռնարկատիրական գործունեության կառավարում), տնտեսագիտության տեսություն, բիզնեսի կազմակերպում, մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում, էլեկտրոնային բիզնես մասնագիտությունները: ՀՊՏՀ բակալավրական կրթության համակարգում ցածր պահանջվածություն, ներքին վերարտադրության ցածր մակարդակ և մագիստրոսական կրթության արտաքին դիմորդների շրջանում պահանջարկի ցածր մակարդակ ունեն՝ զբոսաշրջության կառավարում, հակաճգնաժամային կառավարում, վիճակագրություն, բնօգտագործման տնտեսագիտություն, մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ, կոմերցիա, աշխատանքի տնտեսագիտություն, ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքնություն մասնագիտությունները: ՀՊՏՀ մագիստրոսական կրթության պորտֆելում ներառված են, սակայն համապատասխան պահանջվածություն չունեն պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում, հարկաբյուջետային իրավունք, աշխատանքային իրավունք, կոլեկտիվ ներդրումային համակարգերի կառավարում, նախագծերի կառավարում, սոցիալական կառավարում մասնագիտացումները: ՀՀ աշխատաշուկայում որոշակի պահանջարկ ունեն, սակայն ՀՊՏՀ կրթական պորտֆելում բացակայում են միջազգային գործարարություն, SS ոլորտի ձեռնարկությունների կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում (կադրերի կառավարում) որակի կառավարում և վաճառքների կառավարում մասնագիտությունները: Ելնելով հետազոտությամբ ստացված արդյունքներից՝ հետազոտական խումբն առաջարկում է ՀՊՏՀ բակալավրական և մագիստրոսական մասնագիտությունների և մասնագիտացումների հետևյալ կառուցվածքը:

Ֆինանսական ֆակուլտետ




Ելնելով դաշտի ծածկման անհրաժեշտությունից

Կառավարման ֆակուլտետ




Ելնելով դաշտի ծածկման անհրաժեշտությունից

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ




մազիստրատուրա



բակալավր


միջամբիոնային



բակալավր


մազիստրատուրա

Կառավարչական հաշվառման ֆակուլտետ



մազիստրատուրա

Կառավարման տեղեկատվական համակարգերի ֆակուլտետ





բակալավր

մազիստրատուրա

Ելնելով դաշտի ծածկման անհրաժեշտությունից և ոլորտի հնարավոր զարգացման կանխատեսումներից

Մարքեթինգի ֆակուլտետ



Եզրակացություն

«ՀՀ-ում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկի գնահատումը և կանխատեսումը» թեմայով ներհամալսարանական գիտական դրամաշնորհների նպատակային ծրագրային ֆինանսավորմամբ իրականացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրահանգումներ և առաջարկություններ, որոնցից առավել հատկանշական են.

- ՀՀ զբաղվածության միջին ցուցանիշի և բնակչության միջին զբաղվածության ցուցանիշի համեմատ բարձրագույն կրթությամբ անձինք ունեն զբաղվածության ավելի բարձր մակարդակ և համեմատաբար բարձր եկամուտներ: Բարձրագույն կրթությամբ տնտեսագետ կադրերի զբաղվածությունը թեև ցածր է բարձրագույն կրթությամբ այլ մասնագետների միջին զբաղվածության ցուցանիշից, սակայն տնտեսագետ կադրերի միջին ամսական եկամուտները շոշափելիորեն բարձր են բարձրագույն կրթությամբ այլ մասնագետների եկամուտներից:
- ՀՀ-ում տնտեսագետ կադրերի աշխատանքով ապահովման հիմնական խնդիրները պայմանավորված են բարձրագույն կրթության և մասնավորապես՝ բարձրագույն տնտեսագիտական կրթության բնագավառում մասնագիտությունների հստակեցման կամ կրթական տեղերի հատկացման գործում տնտեսական հաշվարկի բացակայությամբ: Այս պայմաններում մի կողմից՝ տեղի է ունեցել տնտեսագետ կադրերի գերարտադրություն, մյուս կողմից՝ բուհեր-գործատուներ-աշխատաշուկա կապերի խզվածության պարագայում բուհերը հիմնականում չեն տիրապետել գործատուների պահանջմունքներին՝ ինչպես անհրաժեշտ կադրերի քանակության, այնպես էլ կադրե-

րի որակավորման և անհրաժեշտ մասնագիտական կարողությունների ապահովման համար:

- ՀՀ աշխատանքային շուկայում աշխատանքի առաջարկի 20-30%-ը բաժին է ընկնում տնտեսագիտական մասնագիտություններին: Ամենապահանջված տնտեսագիտական մասնագիտություններն են՝ հաշվապահի (աուդիտորի), վաճառքի մասնագետի (ղեկավարի), մարքեթինգի մասնագետի (ղեկավարի), ֆինանսիստի (ֆինանսական վերլուծաբանի), գովազդային գործակալի, հասարակության հետ կապերի պատասխանատուի, բանկային գործի մասնագետի (վարկային մասնագետի) մասնագիտությունները: ՀՀ-ում տնտեսագետ կադրերի աշխատանքով ապահովման գործընթացին խոչընդոտում է նաև գործատուների կողմից, կրթությանը զուգահեռ, աշխատանքային փորձի առկայության պահանջը, ինչը բուհերի շրջանավարտներին զրկում է մեկնարկային առավելություններից:
- ՀՀ-ում տնտեսագետի մասնագիտությունը ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածում ամենաերիտասարդներից է. առկա կադրերի միայն 15 %-ն են, որ 55 տարեկան և ավելի բարձր տարիք ունեն, սակայն բացարձակ արժեքով հինգ տարի անց, առկա մասնագետների թոշակի անցնելու կապակցությամբ, ավելի շատ աշխատատեղեր կառաջանան պետական հատվածում, իսկ առավել բարձր եկամուտ ապահովող ոլորտները համեմատաբար «տաքացած են»: Ներկայիս տեմպերով ուսանողների ընդունելության դեպքում արդեն հինգ տարի անց տնտեսագետների տարեկան թողարկումը 10-20 անգամ ավելի մեծ կլինի, քան տարեկան ձևավորվող աշխատատեղերը: Բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների համար նոր աշխատատեղերի առաջացման առումով հիմնականում ներու-

ժային են համարվել ծառայությունների և SS ոլորտները:

- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ՀՀ կրթական ծառայությունների շուկայի բացահայտ առաջատարն է, ինչպես ուսանողների թվի, այնպես էլ թողարկվող մասնագիտությունների ցանկի տեսանկյունից: ՀՊՏՀ բակալավրիատում առկա են ՀՀ բարձրագույն կրթության բոլոր 17 բազային մասնագիտությունները (10 մասնագիտացումներով), մագիստրատուրայում թողարկվում են 42 մասնագիտություններ և մասնագիտացումներ, որոնք սակայն դիմորդների շրջանում ունեն ոչ հավասարաչափ պահանջվածություն և վարկանիշ, ինչպես նաև ոչ հավասարաչափ վերարտադրողականություն: ՀՊՏՀ կրթական մասնագիտությունների ցանկում ցածր վերարտադրողականություն և մագիստրոսական ծրագրերի արտաքին սպառողների շրջանում ցածր պահանջարկ ունեցող մասնագիտություններ պահելը բացասաբար կարող է անդրադառնալ ՀՊՏՀ ֆինանսական դրության և, որոշակի առումով, նաև հեղինակության վրա (կապված շրջանավարտների շրջանում աշխատանք գտնելու սահմանափակ հնարավորության հետ), ինչի միակ լուծման ճանապարհը մասնագիտությունների ցանկի վերանայումն է:

Գրականության ցանկ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգրքեր 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012:
2. ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2007-2011 թթ., Երևան 2011 թ.:
3. World Economic Forum, Global Competitiveness Index 2009, 2010, 2011, 2012, 2013:
4. Հայաստանում բարձրագույն կրթությամբ շրջանավարտների պահանջարկի և զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրություն, ՀՀ ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2011:

ՕՐԵՆՔՆԵՐ

1. ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին /23.06.2011/:
2. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին / 14.04.1999/:
3. Հայաստանի Հանրապետության օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին /14.12.2004 թ.:/:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում /31 մարտի 2011 թվականի N 322-Ն/:
2. «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության որոշում /30 հունիսի 2011 թվականի N 978-Ն/:

3. «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում /30 հունիսի 2011 թվականի N 959-Ն/:
4. «Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում /9 հուլիսի 2009 թվականի N 808-Ն/:
5. «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում /16 հունվարի 2001 թվականի N 24/:
6. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում /9 նոյեմբերի 2005 թ. N 1933-Ն/:
7. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում /30 օգոստոսի 2007 թվականի N 1038-Ն/:
8. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում /22 դեկտեմբերի 2005 թվականի N 2307-Ն/:
9. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2009/2010,

2010/2011, 2011/2012, 2012/2013 ուսումնական տարիներին՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով տեղերը հաստատելու մասին ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներ:

10. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2009/2010, 2010/2011, 2011/2012, 2012/2013 ուսումնական տարիներին՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով տեղերը հաստատելու մասին ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներ:
11. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2013/2014 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում /4 ապրիլի 2013 թ. N 398 -Ն/:
12. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2013/2014 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում /4 ապրիլի 2013 թ. N 399-Ն/:

ՀՐԱՄԱՆՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ ԿԳ նախարարի հրաման /21 հուլիսի 2010 թվականի N1167-Ն/:
2. «Բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտական չափորոշիչների համապատասխանեցման մասին» ՀՀ ԿԳ նախարարի հրաման /25 մայիսի 2007 թվականի N 491Ա /Ք/:
3. «ՀՀ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳ նախարարի հրաման /15 օգոստոսի 2006 թվականի N 671-Ն/:

АННОТАЦИЯ

А.Е. Закарян, А.В. Григорян, К.О. Аракелян,
Н.Ж. Гукасян, В.Г. Григорян

***Прогнозирование и оценка спроса
специалистов с высшим экономическим
образованием в РА***

В работе сделан анализ и прогнозирования изменений потребностей специалистов с высшим экономическим образованием в РА.

SUMMARY

A.Y. Zakaryan, A.V. Grigoryan, K.H. Arakelyan,
N.ZH. Ghukasyan, V.H. Grigoryan

***Estimation and Prediction of Demand for
Specialists With Economic Education in the RA***

Analysis and forecast of requirements for specialists with higt economic education in the Repulic of Armenia have been conducted in the work.

**ՀՊՏՀ ՆԵՐՀԱՄԱՆԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ**

Ծրագրի գիտական ղեկավար՝
տ. գ. դ., պրոֆեսոր Ա.Ե. Զաքարյան

Կատարողներ՝
տ. գ. թ., դոցենտ Ա.Վ. Գրիգորյան
տ. գ. թ. Վ.Հ. Գրիգորյան
տ. գ. թ. Ն.Ժ. Ղուկասյան
տ. գ. թ. Կ.Հ. Առաքելյան

**ՀՀ-ՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ**

Խմբագիր՝ Ս. Ալավերդյան
Էջադրումը և սրբագրումը՝ Ռ. Պեղրոսյանի
Ձևավորումը՝ Ն. Խչեյանի

Չափս՝ 60×84¹/₁₆:
5 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37